373
Ч-99

шф - 24159 - 60

0120-10

ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՈՒՍ.-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Գ. 1 ա.

ՑԾԿ

894/131

## ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ

## ԾՐԱԳԻՐԸ

ԹԻՖԼԻՍ
ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1931

Арм.
Կ-694ա
373
Հ-99

ՌՒՍ. - ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ

## ԾՐԱԳԻՐԸ

Г.П.Б. ... 1951 год
Акт № 11-292

Инв. № 12910

ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
1930 Թ.

12 AUG 2013

57 568

# ԱՌԱՋԱԲԱՆ

Սոցշինարարության արագ տեմպը ժողովրդական տնտեսության մեջ, արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալ-տեխնիկական ռեկոնստրուկցիայի (վերակառուցման) հետ հիմնական բեկում է առաջացնում հասարակական կյանքի մեջ։ Քանդվում է հինը՝ շահագործման վրա հենված հասարակական փոխհարաբերությունները և նրա փլատակների վրա ստեղծվում է նոր սոցիալիստական տնտեսություն, նոր հասարակական փոխհարաբերություններ։ Դասակարգային պայքարի սրման այս շրջանում, յերբ մեզանում պրոլետարիատը սրարշավ սոցիալիստական հարձակումներ է գործում բոլոր ճակատներում, — մանր սեփականատիրական հոգեբանությունը, սովորությունները, կրոնական տրամադրությունները, անտարբեր վերաբերմունքը դեպի հասարակական աշխատանքը, անտարակույս այս ամենը վորոշ ներգործություն են ունենում յերեխայի վրա և այդպիսով խոչընդոտ ստեղծում սոցիալիստական շինարարության դեմ, աշխատելով կասեցնել նրա հաղթական ընթացքը։

Այս է պատճառը, վոր մեր նոր ծրագրերը սուր կերպով առաջադրում են դպրոցներին այս բոլոր վտանգավոր յերևույթների դեմ պայքարելու անհրաժեշտությունը։ Դպրոցական վողջ աշակերտությունը աշխատավորական լայն մասսաների հետ պետք է լծվեն հին կենցաղի դեմ մղվող պայքարին։ աշխատանքի այս ձևը ուսուցչին ահագին նյութ է տալիս մանկավարժական գործը ճիշտ ուղիով տանելու համար։ Սոցիալիստական շինարարության նվաճումները, սոցիալիստական նոր փոխհարաբերություններ են ստեղծում աշխատանքի և կենցաղի բնագավառում։ Սոցիալիստական նոր փոխհարաբերությունները պետք է հիմք լինեն ուսուցչին իսկական աշխատավորներ, սոցիալիստական շինարարներ դաստիարակելու գործում։

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է, վոր ինքը ուսուցիչը վոչ թե լոկ համակրողի դերում լինի, այլ անմիջական ակտիվ մասնակիցը սոց. շինարարության։

Բացի սրանից նոր ծրագրերը հատուկ ուշադրություն են դարձնում մանկան առանձնահատկություններին, — իսկ այս իր հերթին պահանջում է վոր ծրագրերը հիմնովին ուսումնասիրվեն, ունակությունների զարգացումը կրեն վոչ թե ֆորմալ բնույթ, այլ բղխեն մանուկների պահանջից և

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

40067-63



և նրան մատչելի նյութերից։

Հասկանալի յե, ուրեմն, վոր նոր ծրագրերի հիման վրա պետք է վերաքննվեն նաև դասավանդման մեթոդները։ Ինչպես ասացինք, այս ծրագրերի հիմքը կազմում է մեր իրականության ուսումնասիրությունը, իսկ այս հնարավոր է այն դեպքում, յերբ դպրոցը և աշակերտությունը անմիջական գործնական մասնակցություն ունեն մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը։ Այս իսկ պատճառով նոր ծրագրերը գործնական աշխատանքի մեթոդով են կազմված և թեմաները պրոեկտ-նախագծի բնույթ ունեն։ Պրոեկտի մեթոդը, վոր որգանապես կապում է տեսականը գործնականին, ամբողջապես համապատասխանում է կոմմունիստական դաստիարակության սկզբունքներին։ Ամեն մի պրոեկտ — սոց-դաստիարակության հիմքըն է կազմելու։

Նոր ծրագրերը, ամբողջապես կազմված լինելով պոլիտեխնիկական դաստիարակության և գիտելիքների հիմունքներով, լայն տեղ են տալիս արտադրության տարբեր ճյուղերի ուսումնասիրությանը, վորոնց շուրջը համախմբվում է ամբողջ նյութը։ Սրա հետ միասին անհրաժեշտ է, վոր ամեն մի դպրոց ունենա իր սեփական փոքրիկ տնտեսությունը, մանավանդ, վոր ծրագրերում արդյունաբերության հետ բավական լայն տեղ է տրված նաև գյուղատնտեսության ճյուղերին։

Կրկնում ենք, վոր նոր ծրագրերը իբրև արդասիք տնտեսական հասարակական նոր փոխհարաբերությունների, ունեն նոր ու նոր բազմաթիվ սկզբունքներ. բնական է, վոր նրա իրագործման ընթացքում կհանդիպեն բավական խոչընդոտների։ Սրան պետք է ավելացնել նաև այն, վոր շատ դեպքում ծրագրերը կարող են չհարմարվել տեղական պայմաններին և մեր իրականությանը։ Սակայն մեր նպատակներից մեկն էլ այն է, վոր գործնական աշխատանքների միջոցին առաջ յեկած նոր խնդիրները ի մի գումարենք և այդպիսով ուղղենք ու վերամշակենք մեր նոր ծրագրերը։

# I ԽՄԲԱԿ

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| 1. Ցերեխայի ամառվա կյանքը և տպավորությունները։ | 1. Ի՞նչ եյինք անում և ինչպես եյինք ժամանակ անցկացնում յես և ընկերներս։ | — Ծանոթություն մանկան հետ (նրա ազգանունը, անունը, ընտանիքի անդամները և այլն)։<br>Վորտե՞ղ և ո՞ւմ հետ է անցկացրել ամառը, ի՞նչպես է զբաղվել, ի՞նչ խաղեր են խաղացել ընկերների հետ (դաշտում, անտառում, այգում, կալում)։<br>Բնության ի՞նչ յերևույթներ են (ջրի վարարում, կայծակ, փայլատակում) տպավորություն թողել յերեխայի վրա։<br>Ի՞նչ պատրաստություններ եր տեսնում յերեխան դպրոց գնալու համար։ |
| | 2. Ո՞ւմ և ի՞նչ աշխատանքի յեմ աջակցել ու մասնակցել ամառվա ամիսներին· | — Ի՞նչպես եր օգնում ամառը ծնողներին, չքավորներին, վորբերին, այրիներին և կոլլեկտիվին ու խնամում, արածացնում կով, հորթ, սագեր, օգնում կալսելուն, ճաշ տանում աշխատավորներին և այլն։ |
| | 3. Ի՞նչպես պետք է կարգավորենք մեր կյանքը դպրոցում։ | — Ծանոթություն դպրոցական շենքի, դասական պիտույքների, կարգերի հետ. դասարանի մաքրությունը, կանոնավոր հաճախելը, հերթով պատասխանելը, խոսելը, ուրիշին լսելը, յերեսի, մազերի, շորերի և մարմնի մաքրությունը. թաշկինակի գործածությունը, պայուսակի կանոնավոր գործածությունը գրքերին խնամքով վերաբերվելը։ |
| 2. Խմբակի պատրաստությունները աշնանային աշխատանքների համար։ | 1. Մասնակցենք բերքի հավաքմանն ու պահպանությանը։ | Ի՞նչ փոփոխություններ նկատեցինք բնության մեջ. քամի, անձրև, ցերեկվա կարճանալը և գիշերվա յերկարանալը, տերևների դեղնելն ու թափվելը. բանջարանոցը կորցնում է իր կանաչ գույնը, բզեզների շարժումն ու բզզոցը դադարում է թռչունները պատրաստվում են չվելու. բնակիչներն շտապում են բերքն հավաքել ու պահել։ |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Գյուղացիները պատրաստություն են տեսնում հացահատիկներ, բանջարեղեններ, մրգեր և խաղող հավաքելու (զամբյուղներ, քթոցներ են պատրաստում, կարասներ, հնձաններ լվանում և այլ)։<br>Ի՞նչպես պետք է քաղենք խաղողը, մրգերը (խնձոր, ընկույզ և այլն)։ Ի՞նչ է մթերում ազգաբնակությունը ձմեռվա համար, ցորեն, մրգեր, կարտոֆիլ, սոխ և այլն։<br>Մասնակցություն մեծ ընկերների հետ յեգիպտացորեն, միրգ, խաղող, կարտոֆել հավաքելու գործին։<br>Ի՞նչ սերմացու յե պահվում գարնան համար. |
| | 2, Աջակցենք մեծ ընկերներին բերքի որը անցկացնելու համար։ | Ի՞նչպես է դպրոցը կատարում բերքի որը պիոներների ղեկավարությամբ. (որվան հատուկ վոտանավոր, նկարներ պատրաստել և այլն)։ |
| | 3. Հոկտեմբերյան տոնակատարություն։ | Ո՞վ եր Լենինը, բանվորների դրությունն առաջ և հիմա (Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո)։ Ի՞նչպես է լինելու հոկտեմբերիկը և ի՞նչ օրինակ պետք է տա ուրիշ յերեխաներին՝ լինել համարձակ, ճշմարտախոս, աշխատասեր, ուշադիր, կարգապահ, մաքրասեր և այլն։ Ի՞նչպես պետք է արձագանքի հոկտեմբերիկը օտար յերկրների թշվառ, վորբ յերեխաներին — միմիանց մեջ կոպեկներ հավաքել նրանց օգնելու համար։<br>Ո՞ւմ հետ և ի՞նչպես պետք է անցկացնենք Հոկտեմբերյան օրերը։ Ի՞նչ պատրաստություն է տեսնում մեր ժողովուրդը Հոկտեմբերը դիմավորելու համար և ի՞նչ աջակցություն պետք է ցույց տանք նրանց (զարդարել բնակարանները Լենինի նկարով, կարմիր դրոշակներով և ծաղիկներով, մեր փոքրիկ քույրերին և |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | յողբայրներին դպրոցից բերենք կարմիր նշաններ այս օրը հավերժացնելու համար)։ Աջակցենք մեծ ընկերներին ցերեկույթներ և յերեկույթներ կազմակերպելու — նկարներ, վոտանավորներ պատրաստենք և հրավիրենք մեր ծնողներին։ |
| 3. Ձմեռվա աշխատանքը և խմբակի մասնակցությունը։ | 1. Պարզենք թե ինչ պատրաստություն են տեսնում դպրոցն ու ազգաբնակությունը ձմեռվա համար և աջակցենք նրանց։ | Կարգավորենք մեր բնակարանն ու դպրոցը ձմեռվա համար (վառելիք պատրաստել, ապակիներ գցել, վառարանը մաքրել, վոտներ սրբելու հարմարություններ ստեղծել, ճանապարհ բաց անել և այլն), հագուստ պատրաստենք ձմեռվա համար, վորպեսզի չմրսենք։ Ի՞նչպես են մեր աշակերտների կյանքի պայմանները (սնունդը, հագուստը տան մաքրությունը, աշխատանքի պայմանները) լավացնենք ընդհանուրի դրությունը և ոգնենք միմիանց։ Պարզենք թե ինչպես են ապրում կոլտնտեսության յերեխաները, անդամագրվենք դպրոցական կոոպերատիվին, ձեռք բերենք դասական պիտույքներ ընդհանուրի (խմբակի համար — մատիտներ, ծայրեր, գրչակոթեր, թանաքամաններ և այլն. պահպանենք խմբի գույքը ընդհանուր ուժերով։ |
| | 2. Պարզենք թե ինչ է անում ազգաբնակությունը ընտանի կենդանիների պահպանության համար և աջակցենք այդ գործին։ | — Ի՞նչ փոփոխություն կրեց այգու, անտառի և դաշտի պատկերը ցրտի ազդեցության տակ. ինչ պետք է խաղանք սենյակում, վատ յեղանակներին, ոգտագործենք մեր հավաքած տերևները, ծառի կեղևները, մամուռը և այլն։ Պատրաստենք տանը և դպրոցում թռչունների և կենդանիների համար բներ և կեր, ինչպես են հարմարվում զանազան կենդանիներ (արջը, գայլը, աղվեսը, սկյուռը, վոզնին և այլն) ձմռան ցրտերին (սննդի |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | մթերում, վորջի պատրաստություն, մազի, գույնի փոփոխվելն ու աճումը և այլն)։<br>Սահնակ, ձնագնդի խաղալը, ձնե մարդ շինելը, սղղաններ պատրաստելը, սահելը և այլն։ |
| | 3. Ի՞նչ միջոցներ ձեռք առնենք, վոր չհիվանդանանք և ինչպես վարժեցնենք մեր տանեցիներին սենյակների օդը շուտ-շուտ մաքրելուն։ | Ի՞նչպես փոխվեց դպրոցի բակի, անտառի պատկերը ձմեռվա ազդեցության տակ։ Հեշտացնենք դպրոցից հեռու ապրող ընկերների յերթևեկությունը սառնամանիքների ժամանակ (աջակցություն գործկոմի, աջակից կոմիտեյի (սովտդի) և բարձր խմբակների աշակերտության կողմից)։ Ո՞վ չի հաճախում դպրոց և ինչո՞ւ, հոգ տանենք հիվանդ ընկերներին. պահպանենք մեզ տարափոխիկ հիվանդություններից։ Պահպանենք մարմնի, յերեսի, գլխի, շորերի մաքրությունը և այլն։ Հանձնարարենք վորոշ ընկերներին, վոր պարզեն թե ինչպե՞ս է ազգաբնակությունը մաքրում բնակարանների օդը և հորդորենք նրանց, վորպեսզի գոնե մի ժամ օրական բաց անեն պատուհանները։ Հրավիրենք բժշկին։ Բժշկից և ուսուցիչներից ստացած առողջապահական գիտելիքները տարածենք մեր ծնողների և ժողովրդի մեջ, վորպեսզի նրանք հեռու մնան գրբացներից ու աղոթքներից։ |
| | 21 — 22 հունվարի օրերը։ | — 21-ն հունվարի — Լենինի մահվան օրը. 22-ն հունվարի Արյունոտ կիրակի (հունվարի 9-ը), ինչ եյին պահանջում բանվորները թագավորից. Թագավորի պատասխանը, բանվորների կոտորածը։ |
| | 4. Ինչով է պարապում մեր հասարակությունը ձմեռը և ինչպես մասնակցենք նրա աշխատանքներին։ | Ի՞նչ թռչուններ չվեցին և ինչո՞ւ. մեզ մոտ մնացած թռչունների համար կերի հարմարություն ստեղծել։ Հիմնել թռչունների պահպանության խմբակ և դրսի |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | յերեխաներին մասնակից դարձնել այդ գործին։<br>Աշխատանք փայտի վրա, կար, ձև գուլպա գործել և այլն։<br>Գյուղատնտեսական գործիքների պատրաստությունը և այլ տնային աշխատանքներ։ Ինչպես են ոգտագործում մեր ծնողները ազատ ժամանակը. (խրճիթ - ընթերցարաններում, ժողովներում անգրագիտությունը վերացնող դպրոցներում, կանանց պատգամավորական ժողովներում, դպրոցին աջակցություն ցույց տվող կոմիտեյի աշխատանքներին և այլն)։ |
| 4. Ամառային աշխատանքն ու խմբակի մասն ա՞կ ց ո ւ թյունը։ | Ինչպես է փոխվում յեղանակը, ինչպիսի պատրաստություններ պետքե է տեսնել գարնան համար։ | Գարնան նշանները։ Յեղանակի տաքանալը, գետերի վարարելը, անձրևներ, որվա յերկարելը, առաջին ծաղիկները, ծառերի ծաղկումը և տերևակալելը, միջատների արթնանալը (մեղուների, մրջյունների, ճանճերի և այլ)։ Ի՞նչով պետք է լրացնել մեր կենդանի անկյունը և ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը։ Պատրաստվենք և անցկացնենք «Թռչունի որը»։<br>Հետևենք բույսերի ծիլերին, ծաղիկների աճմանը և միջատների արթնանալուն։<br>Մասնակցենք բանջարանոցների և այգիների մաքրման և ավելորդ ճյուղերի խուզման աշխատանքներին։<br>Գարնանային զանազան խաղեր (առուբաց անելը, թղթե նավակները, լաստը, ամբիճները և այլն)։ Ի՞նչ խաղեր պետք է անցկացնենք ամբողջ խմբով միասին, ի՞նչ պետք է անենք խաղալիքներից հերթով ոգտվելու համար։ Թռչունների վերադարձը, գարնան գուշակներ (սարյակ, ծիծեռնակ և այլն)։ Դպրոցի մաս- |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | նակցությունը անտառի ռրվան (դպրոցի բակում, ճանապարհի և առուների ափերին, հրապարակներում և այլ տեղերում)։ Ի՞նչպես պետք է ոգտագործենք աշնանից պահված սերմերը — վաղահաս բանջարեղեններ ստանալու համար։ Փոքրիկ արկղներ պատրաստել ցանելու համար։ |
| | 2. Ստեղծենք դըպրոցում կոլեկտիվ բանջարանոց։ | — Աշխատանք բանջարանոցում. պարարտացում, ածուներ անցկացնել ավագ ընկերների ոգնությամբ։ Տիթիկ տնկել։ Ինչպես պետք է անել, վոր այս աշխատանքներին մասնակցեն ամենքը, բայց միմիանց չխանգարեն։ Թուխս դնել, ճագերի խնամ։ Ուսումնասիրենք թե ինչպես են կոլտնտեսության մեջ ձագեր հանում և խնամում։ Մրցակցության հրավիրենք մոտակա դպրոցի առաջին խմբի աշակերտներին բանջարանոցը լավ խնամելու համար։ |
| | 3. Ինչ աշխատանքներ է կատարում ազգաբնակությունը գարնանը և ինչ բանում պետք է աջակցենք նրան։ | Ազգաբնակության գարնանային աշխատանքները բանջարանոցում, այգում, դաշտում։ Գործիքներ՝ գութան, տրակտոր, տափան, սերմացան մեքենա։ Բանջարանոցի թշնամիներն ու բարեկամներ (վոզնի, վորթեր, ճիճուներ, թռչուններ և այլն)։ Ինչ աշխատանքներում կարող ենք ոգնել ընտանիքին և կոլտնտեսությանը բանջարանոցում, արտերում, հնձի ժամանակ, կենդանիներին խնամելիս։ |
| | 4. Մասնակցենք Մայիսի 1-ին։ | Ինչպես պետք է անցկացնենք Մայիսի մեկը. ինչու բոլոր բանվորները (վրացի, ռուս, հայ թուրք, հրեա, աբխազ, ոս և այլն) միասին և միևնույն որն են տոնում այդ տոնը։ Այս տոնին ով է դեմ։ Ի՞նչպես պետք է տոնենք այդ որը դըպրոցում։ Համապատասխան վոտանավորներ և նկարներ պատրաստենք։ Հրավիրել տարբեր ազգությունների դպրոցների |

| Գլխավոր թեմանները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| – | | աշակերտներին և նրանց հետ միասին ընդհանուր ցերեկույթ կազմակերպել։ Կազմակերպել ցուցահանդես (գրավոր աշխախանքներ, նկարներ, պլակատներ, լոզունգներ և այլն։ Զեկուցումներ հողաբաժնի վրա կատարած աշխատանքների մասին. Ինսցենիրովկա։ |
| 5. Ինչ արեցինք մենք տարվա ընթացքում։ | | |
| 6. Ինչ պետք է անենք ամառնային ամիսներին։ | 1. Կազմակերպենք մեր կոլեկտիվի բանջարանոցը խնամելու գործը ամառվա ամիսների ընթացքում։ | |
| | 2. Կռվենք հիվանդությունները տարածող ճանճի և այլ միջատների դեմ։ | |



# II ԽՄԲԱԿ

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| 1. Ամառվա աշխատանքների և դիտումների հաշվառքը։ | 1. Աշխատենք միասին ընդհանուր գործի համար։ | 1. Առաջին օրը դպրոցում, պարզենք մեր խմբակի կազմը։ Ով չի հաճախում, ինչու։ Յեվ վոչ մի ընկեր չպետք է բացակայի։ Կարգավորենք աշխատանքի (բանվորական) սենյակը։ Ինչ գործիքներ են պետք մեզ։ Պարտականությունները բաժանենք ողակների միջև, ինչպես բանվորական սենյակն ու գործիքները այնպես էլ խմբակում կարգը պահպանելու համար։<br>Բրիգադներ կազմակերպենք մեր ամառային աշխատանքը հաշվառելու համար։ |
| | 2. Ինչ են անում գյուղում և քաղաքում ամառային ամիսներին, ի՞նչպես ենք աջակցում և ինչպես զբաղվում։ | 2. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ամառվա ամիսներին քաղաքում և գյուղում։ Գյուղում՝ հունձ, խոտհարք, կալ. քաղաքում — շինարարություն—ֆաբրիկա-գործարաններ, հիմնարկությունների աշխատանք և այլն։<br>Ի՞նչպես և ինչ գործիքներով են հընձում, կալսում, խոտ հավաքում գյուղում։ Ի՞նչ կատարելագործված գործիքներ են կիրառում կոլեկտիվները։ Կոլեկտիվ աշխատանքի առավելությունները անհատական աշխատանքի հանդեպ։ Ինչ աշխատանքների ենք մասնակցում։ Ինչպես ենք խնամում դպրոցի և կոլեկտիվի բանջարանոցը։ Ինչ աշխատանքներ կատարեցինք աջող և ինչ չկարողացանք կատարել։ Յեթե ամառ ժամանակ տեղի ունեցավ բնության այնպիսի յերևույթներ, վորոնք վնասել են ցանքսը (յերաշտ, կարկուտ, հեղեղներ և այլն), ինչպես է կռվել գյուղը դրանց դեմ (ինչ գործիքներով ու միջոցներով), ինչպես եր աջակցում պիոներ կոլեկտիվը գյու- |

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | դին։<br>Ի՞նչ հասարակական նոր շենք կառուցվեց մեր գյուղում (քաղաքում՝ մեր ռայոնում), ի՞նչ հիմնարկության համար, քանի հարկանի և ինչ նյութերից (փայտ, քար, աղյուս և այլն)։ Շենքի ինչ մասերի վրա գործածեցին փայտը և ինչ գործիքներով եյին աշխատում քարի ու փայտի վրա։<br>Ինչպես եյինք հետևում ամառվա ամիսներում դպրոցական կոլլեկտիվի բանջարանոցին, ինչ հետազոտություններ և փորձեր կատարեցինք։<br>Առողջապահական ինչ նոր ունակություններ ձեռք բերինք ամառվա ամիսներին, ջուր, օդ, արև օգտագործելու կանոնները, ֆիզկուլտուրայի ունակությունները և այլն։ Ինչ նոր խաղ—զբաղմունք սովորեցինք։ |
| 2. Աշնանային բնությունն ու աշխատանքները։ | 1. Հացահատիկների մթերումը։ Մասնակցենք բերքի մթերման։ | Գյուղատնտեսի և ուսուցչի մասնակցությամբ պարզենք՝ հասե՞լ են բանջարեղենները թե ոչ։ Կարգավորենք բանջարեղենների պահեստատեղը, ինչպես նաև արկղներ, կթոցներ, զամբյուղներ, հոր փորենք, ձեռք բերենք կճուճներ և այլն։ Աշխատանքի բաժանում կատարենք և վորոշենք թե վո՞ր բանջարեղենը յե՞րբ հավաքենք։ Պահենք ձմեռվա համար բանջարեղեններն այնպես, վոր չփչանան (աղանել, չորացնել, թթու դնել և այլն։) Ցուցահանդեսի համար ընտրենք լավագույն նմուշները։ Գնահատենք բերքի քանակը և վորակը։<br>Ցերեկվա կարճանալը և գիշերվա յերկարանալը։ Ցրտեր առավոտյան և յերեկոյան. հաճախակի քամիներ, տերևների դեղնելը, — նշաններ, վորոնք ցույց են տալիս թե բերք հավաքելու ժամանակն է։ |



| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Ի՞նչպես կարող ենք աջակցել կոլտնտեսություններին բերքը հավաքելու գործում։ Հացամթերման կամպանիա։ Քաղաքը օգնում է գյուղի հացամթերմանը, աջակից բրիգադներ, պատասխանատու աշխատավորների ղեկավարությամբ։ Հացամթերումը կատարել պլանից ավելի, սրա համար համապատասխան լոզունգներ և պլակատներ պատրաստել։ Ի՞նչ տեսակ միրգ և խաղող կա մեր գյուղում. վորն է դրանցից ավելի դիմացկուն և վորը՝ շուտ փչացող։ Ի՞նչ բանջարեղեններ կան մեր գյուղում. ի՞նչպես են բերք հավաքում խորհ. և կոլտնտեսություններում։ Վո՞րի բերքն է ավելի լավ՝ — կոլտնտեսության, խորհտնտեսության թե՞ մասնավորի. ինչով ենք բացատրում կոլտընտեսության բերքի առավելությունը։ Ի՞նչպես են պահում և օգտագործում ձմեռը բերքը կոլտնտեսությունները, մասնավոր և խորհտնտեսությունները (միրգ, խաղող, հացահատիկներ, բանջարեղեններ). վորտե՞ղ և ո՞ւմ միջոցով են սպառում բերքը կոլտնտեսությունները և մասնավորները — կոոպերատիվներ, պետառ։<br>Պիոներ կոլլեկտիվի ղեկավարությամբ դպրոցը գումարում է ծնողական ընդհանուր ժողով բերքի ավելորդը կոոպերատիվին հանձնելու համար։ Այս ժողովին օգտագործել մեր աշխատանքները՝ նկարներ, պլակատներ, դիագրամներ և այլն։<br>Դպրոցական հողամասերի մաքրելը վնասատու բույսերից և միջատներից։ Ինչպես պետք է մաքրել վարելահողը։ |
| | 2. Աշնանացան. բանվորական բրիգադները գյուղում. օգնենք գյուղատըն- | Դպրոցում ստացած գիտելիքները կիրառենք այս գործում։ Ի՞նչպես են վարուցանքս անում մասնավոր, խորհ. և կոլ- |

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | տեսության կոլեկտիվացմանը։ | տնտեսությունները։ Պլանային աշխատանք՝ սերմացուն պատրաստել ժամանակին, ապահովել անհրաժեշտ գործիքներով և այլն։ Քաղաքի բանվորական բրիգադները գյուղում. գործիքների և մեքենաների նորոգում։ Քաղաքի բանվորները ուղարկում են գյուղ մեքենաներ, գործիքներ, պարբերական թերթեր, լրագրներ, գրքեր, բրոշյուրներ, ցանքս աջող կերպով անցկացնելու համար։ Կոլեկտիվ ցանքսի առավելությունը մասնավորի հանդեպ։ Մասնավոր տնտեսությունները պետք է միացվեն կոլտնտեսություններին իրենց տնտեսության վիճակը լավացնելու համար։ Պատրաստենք պլակատներ և լոզունգներ կոլտնտեսության վերաբերյալ. վոչ մի չքավոր և միջակ գյուղացի չպետք է դուրս մնա կոլտնտեսություններից։ Դիտենք թե ինչպես են քաղաքի բանվորները նորոգում գործիքներն ու մեքենաները. ծանոթանանք սերմացրիչ մեքենային, շարքացանի և սերմ պահելու յեղանակի հետ։ Պատրաստենք մեքենայի տարբեր մասերի մոդելներ. սովորենք նրանց անունները, նկարենք մեքենաներ։ |
| | 3. Անցկացնենք բերքի և կոլեկտիվացման օրը։ | — Բերքի, կոլեկտիվիզացիայի օրը կազմակերպված ցուցահանդեսին մասնակցենք մեր բանջարեղենների նմուշներով։ Ոգնենք կոլեկտիվ և խոր. տնտեսություններին ցուցահանդես կազմակերպելու գործին։ Պատրաստենք մեր բանջարանոցի բերքի քանակը և վորակը ցույց տվող դիագրամները։ Լոզունգներ կազմենք և ցուցադրենք բերքը ավելացնելու և կոլեկտիվիզացիայի մասին։ |



| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Պարզենք թե գյուղատնտեսական ինչ նոր գործիքներ ձեռք բերեց կոլտնտեսությունը։ Սերմի ֆոնդը ավելացնելու գործում ում հետ եր սոցմրցման մեջ. հաղթանակով դուրս յեկա՞վ թե վոչ։ |
| 3. Հոկտեմբերյան օրերը։ | | — Ո՞վ եր Լենինը. ինչ եր սովորեցնում նա բանվորներին և գյուղացիներին։ Ում ձեռքին է մեր յերկրի իշխանությունը։ Բանվորներն ու գյուղացիները կոմկուսի ղեկավարությամբ, թագավորի, կալվածատերերի և կապիտալիստների ձեռքից խլեցին հողն ու ֆաբրիկա-գործարանները, հաստատեցին խորհրդային կարգերը։ Ինչ պատրաստություններ տեսնենք ու տոնենք Հոկտեմբերյան հեղափոխության օրը մեր խմբակում։ Ինչ մասնակցություն պետք է ունենանք այն ցերեկույթին կամ յերեկույթին, վոր կազմակերպում է դպրոցը մեր ծնողների համար։ Կոմկուսի ղեկավարությամբ ինչպես տոնեց այդ օրը մեր գյուղը, բնակիչների վո՞ր մասը ավելի տաք մասնակցություն եր ցույց տալիս այդ տոնին։ |
| | 4. Ինչպես են կենդանիներ ու բույսեր տանում (վարժվում) ձմեռը։ | Բանջարանոցի միամյա և յերկամյա բույսերը։ Տերևափոխը ծառերի և թփերի։ Բողբոջ. ինչ ծառերի տերևներ ու ճյուղերը չորացան։ Ինչպես են տարածվում զանազան բույսերի սերմերը։ Ինչպես են անցկացնում ձմեռվա ամիսները ծիծեռնակը, ճնճղուկը, ագռավը, գորտը մողեսը, միջատները։ Ընտանի կենդանիներն ու նրանց կյանքը ձմեռվա ամիսներին։ Ինչպես են մարդիկ խնամում նրանց։ Ինչպես են վարժվում ձմեռվա պայմաններին (մազերը մեծանում են և այլն)։ |
| | 5. Մարդու պատ- | Դպրոցի և բնակարանի կտուրների |

| Գլխավոր թեմաները | Պրոբլեմներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | րաստությունները ձմեռվա համար։ | նորոգումը, ապակիներ գցելը, վառարանների մաքրելը, պատուհանների ու հատակների ծակերի գոցումը և այլն։<br>Հագուստի համար բրդի կտորների գնումը։ Ինչո՞ւ ենք ձմեռը գործածում շալերեն (բրդի հագուստը)։ Ծանոթանալ, թե ինչպես են գործում կտորները։ Ի՞նչ նյութերից և ինչ գործիքներով են պատրաստում գործվածքները։ Վոր վառելանյութերը (փայտ, քարածուխ, աթար) ավելի ձեռնտու յեն, եժան, ավելի լավ։ Վո՞ր տեսակի փայտն է ավելի մեծ տաքություն տալիս։ Ինչո՞ւ քարածուխը գերադասելի յե [illegible]։ Ի՞նչ մթերքներ պետք է պատրաստենք ձմեռվա համար, ինչպիսի ալյուր։ Ցորենի թե յեգիպտացորենի ալյուր ավելի յերկար կարելի յե պահել։ Ինչ մսեղեն են պահում մեզ մոտ։ Ինչպես պետք է պահել միսը, վոր չփչանա։ |
| 4. Ձմեռվա բնությունն ու աշխատանքը։<br>Քաղաքը, վորպես սոցշինարարության ղեկավար։ | 1. Քաղաքը, վորպես սոցշինարարության ղեկավար։ | — Ո՞վ է ապրում քաղաքում (բանվորներ, ծառայողներ, արհեստավորներ, մասնավոր առևտրականներ) քաղաքի բանվորները սոցշինարարության ղեկավարներ են։ Քաղաքում բանվորները մեծամասնություն են կազմում, գործկոմի նախագահը բանվոր է լինում։ Բանվորները գործարաններում և ֆաբրիկաներում պատրաստում են, գործիքներ, մեքենաներ, չթեղեն, կտավ, մահուդ, կոշիկներ, շաքար և այլն։ Բանվորները գյուղն են ուղարկում մեքենաներ ու գործիքներ, իսկ գյուղը նրանց—ցորեն, բուրդ, կաշի, յուղ, ձու, կարագ և այլ մթերքներ ու հում նյութեր։<br>Քաղաքի ազգաբնակությունը խիտ է բնակեցրած։ Քաղաքի փողոցներն ու շենքերը։ Ինչ հասարակական հիմնարկու- |

V 40067-67



| Գլխավոր թեմաները | Պրոբլեմներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | թյուններ կան մեր ռայոնում, մեր փողոցում։ Ինչ ֆաբրիկա-գործարաններ կան մեզ մոտ։ Ինչ են արտադրում այդ ֆաբրիկա-գործարանները։ Այցելենք ֆաբրիկա-գործարանը, պարզենք ինչ համքարներ (ցեխ) կան այնտեղ, ինչքան բանվոր է աշխատում, ինչպիսի են աշխատանքի պայմանները (քանի ժամ են աշխատում. իսկ առաջ քանի ժամ եյին աշխատում, սպեց հագուստ, արձակուրդներ, հիվանդության ժամանակ ոգնություն, ապահովագրություն և այլն)։ Ի՞նչպես են պայքարում բանվորները աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար. սոցմրցակցություն, հարվածային բրիգադներ, կռիվ հարբեցողության, ծխելու և գործից փախչելու դեմ։<br>Քաղաքի փողոցները։ Փողոցում շարժվելու (մանգալու) կանոնները. տրամվայ. ինչ ույժով է շարժվում։ Հեռախոսաթելեր, քաղաքի հեմելիներ, արձաններ, հրապարակներ, կամուրջներ։<br>Մեր տնային ընկերությունները. քանի տուն կա միացրված։ Ընդհանուր խոհանոց, սեղանատուն, ընթերցարան։ Համայնական լվացարան. ֆաբրիկա-խոհանոց։ Դիտեցեք համայնական լվացարանները և ֆաբրիկա-խոհանոցը։ Ուսումնասիրեցեք աշխատանքի պայմանները։ Ինչ գործիքներ ու մեքենաներ են կիրառում։ Համեմատեցեք ձեռքի աշխատանքը մեքենաների աշխատանքի հետ։ |
| | 2) Ի՞նչ է անում գյուղը ձմեռվա ամիսներին։ | Ձմեռվա յեղանակները, գյուղի պատկերը ձմեռվա ամիսներին, ձյունի խորությունն և սառցալուլաների յերկարության տարբերությունը հարավային և հյուսիսային կողմերում։ Ձմեռվա խաղերը։ Ի՞նչ է պատրաստում գյուղացին |



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | իր կարիքների համար և ինչ վաճառելու համար։ Յերկաթի, փայտի և մանելու նյութերի վերամշակումը։ Ծանոթություն դարբնոցի, հյուսնոցի և ջուլհականոցի հետ։ Ինչ նյութեր են կիրառվում այս արտադրությունների մեջ։ Ինչ գործիքներով և մեքենաներով են աշխատում։ Ուսումնասիրեցեք դարբնոցը, հյուսնոցը, ջուլհականոցն ու կարի արհեստանոցը։<br>Ինչ ընտանի կենդանիներին ե խնամում, կերակրում և գործածում մարդը (սննդատու, աշխատող և այլն)։ Գործդնենք դպրոցում ձեռք բերած ունակությունները և օգնենք մեր ծնողներին ու կոլտնտեսություններին ընտանի կենդանիներին և թռչուններին խնամելու գործում (մաքրություն, կերի ընտրություն, չափով կերակրելը և այլն)։ Պարզենք թե անասունները ինչով են հիվանդանում և ինչպես են կռվում գյուղացիները այդ հիվանդությունների դեմ։ Ինչ սնոտիապաշտություններ կան այդ հարցի շուրջը (աղոթել և այլն)։ Կռվենք սնոտիապաշտությունների դեմ։<br>Ինչպես ե կազմակերպված (սարքավորված) և ինչ աշխատանքներ ե տանում մեր գյուղում խրճիթ - ընթերցարանը (զանազան խմբակներ, բարձրաձայն ընթերցանություն, դատ)։ Ինչ մասնակցություն ունեն գյուղացիները զանազան խմբակներում, անգրագիտության վերացման մեջ, ինչպես և կիսագրագիտական դպրոցներում։ Յեվ վոչ մի անգրագետ աշխատավոր չպետք ե ունենանք։ Ինչպես պետք ե աջակցենք մեր ծնողներին հասարակական աշխատանքներում։ Ինչպես պետք ե հասցնենք նա- |



| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | մակներն ու լրագիրները մեր գյուղի ընթերցարանին և ազգաբնակությանը։<br>Մեր դպրոցի բոլոր խմբակների հետ ընթերցարան կազմակերպենք դպրոցում։ Գրավենք այդ աշխատանքներին նաև դպրոցից դուրս մնացած յերեխաներին։ Պիոներ կազմակերպության հետ միասին և կոմյերիտմիության ղեկավարությամբ «ծննդյան» տոների դեմ աշխատանքներ կազմակերպենք։ |
| | Հունվարի 21 և 22։<br>3. Հնգացողություն առողջության մասին։ | 1905 թիվը, հունվարի 9-ը։ Ո՞վ խաբեց և թագավորի մոտ տարավ բանվորներին։ Ինչ եյին մտածում բանվորները թագավորի մոտ գնալուց առաջ։ Ինչ արեց Գապոնը բանվորներին կոտորել տալուց հետո։ |
| | | Լենինի կյանքի մասին կարճ կենսագրական։ Ինչպես եր պայքարում նա բանվոր դասակարգի համար։ Ինչպես ընդունեց Լենինի մահվան լուրը ամբողջ աշխարհի բանվորությունը։ Ինչ աջակցություն պետքե ե ցույց տա մեր խըմբակը Մանկան բարեկամների ընկերությանը։ Տեղեկություններ տանք այդ ընկերությանը անխնամ մնացած յերեխաների մասին։ |
| | Փետրվարի 25-ը։ | — Վրաստանի անջատումը բոլշևիկյան Ռուսաստանից մենշևիկների ժամանակ։ Պատերազմներ Ադրբեջանի և Հայաստանի դեմ։ Աշխատավոր գյուղացին չկարողացավ հող ստանալ։ Բանվորների դրությունը չբարելավեց, վորի պատճառով տեղի եյին ունենում ապստամբություններ։ Վրաստանի խորհրդայնացումը 1921 թ. փետրվարի 25-ին։ Սրանից հետո ինչպես փոխվեց բանվորների և գյուղացիների դրությունը։ Ի՞նչպիսի փոխհարաբերություններ հաստատվեց զանազան |

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | ազգությունների միջև։ Ինչպես խորացնենք մեր կապը զանազան ազգությունների մանուկների հետ։ Բանվորագյուղացիական պետությունը պաշտպանում է բանվորագյուղացիական կարմիր բանակը։ Ում են ընդունում կարմիրբանակայինների շարքերում. ինչ են սովորեցնում այնտեղ։ Կարմիր զորանոցը — դպրոց է։ Կապ հաստատենք Կարմիր բանակի հետ։ |
| | Հոգացողություն առողջության մասին։ | Մեր սանիտարական խմբակի պարտականություններն ու հաղթանակները։ Բնակարանների սանիտարական-առողջապահական պայմանները գյուղերում և քաղաքում։ Ով և ինչպես է աշխատում բանվորական բնակարանները բարեկարգ վիճակում դնելու համար։ Ինչ է արված և ինչ պետք է անել բակերի, ճանապարհների, ջրհորների սանիտարական վիճակը բարելավելու համար։ Ինչ բովանդակությամբ պլակատներ պետք է պատրաստենք տանը և խրճիթ-ընթերցարանի պատերին կախելու համար։ Դպրոցում և խրճիթ-ընթերցարանում ստեղծենք առողջապահական անկյուն։ Ինչ միջոցներ պետք է ձեռք առնենք տարափոխիկ (կարմրուկ, ծաղիկ, հազ և այլն) հիվանդությունների դեմ։ Մրցակցենք սանիտարական առողջապահական բրիգադների աշխատանքներն ուժեղացնելու համար։ |
| 5. Գարնանային բնությունն ու աշխատանքը։ | 1. Դիտենք, հետևենք բնության երևույթներին։ | Ձյունահալը, գետերի վարարումը։ Ի՞նչպես են կռվում մեր գյուղում վարարման և այլ աղետների դեմ։<br>Ի՞նչ դրության մեջ են արտերը, վորտեղ ավելի լավ են ծլել և ինչու։ Վորչափ աջող են յեղանակները ցանքսի համար։ Առաջին ծաղիկներ և վաղաժամ |



| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | կանաչած ծառերը։ Բնության դիտողության շուրջը տարվող աշխատանքները բաժանենք ողակների միջև։ Կատարենք ամենօրյա դիտումները։ Ինչ մասնակցություն պետք է ունենանք «Թռչունների որը» կազմակերպելու գործում։ Ի՞նչով պետք է, լրացնենք կենդանի անկյունը և ինչ դիտումներ պետք է ունենանք։ Ի՞նչ բույսեր պետք է ցանենք այժմ, վոր հետո կարողանանք տեղափոխել (տընկել) դպրոցական հողամասը։ |
| | 2. Մասնակցենք գարնանացանի կամպանիային։ Ոգնենք կոլտնտեսություններին սերմերը մաքրելու և դեզելու, ինչպես և դաշտերը մաքրելու գործում։ | — Գարնանային աշխատանքների սկիզբը։ Ի՞նչ կարգով և վորքան ուղիղ են մշակում հողը մասնավոր և կոլեկտիվ տնտեսությունները։ Ի՞նչ ոգնություն է ցույց տալիս նրանց գարնանացանի կամպանիայում կառավարությունը, գյուղխորհուրդը, գյուղկոմը, կոոպերատիվը։ Ի՞նչպես են ոգնում քաղաքի բանվորները գյուղին։ Բանվորական բրիգադները գյուղում, գործիքների և մեքենաների առաքումը և այլն։ Գարնանացան։ Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվիզացիայի համար պայքար։ Ցել վոչ մի չքավոր և միջակ գյուղացին գյուղատնտեսական արտելներից դուրս չպետք է մնա։<br>Ի՞նչ ոգնություն կարող է հասցնել դպրոցը։ Ի՞նչ աշխատանքներ են տարվում գարնանը բանջարանոցներում և այգիներում։ Ի՞նչ աշխատանքներ ունենանք գարնանը դպրոցական հողամասում։ Ոգնենք կոլտնտեսության գարնանային աշխատանքներին (սերմացուի զտումը, տեղումը, բանջարանոցների և արտեղերի մաքրումը, չարքացանը, պարարտացումը, կռիվ վնասատու միջատների դեմ)։ Ոգնենք մեր ընկեր հովիվ- |

| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | ներին, վորպեսզի դպրոցի աշխատանքներից հետ չմնան։ |
| | 3. Կազմակերպենք դպրոցում թռչնաբուծական ընկերություն։ | Ծանոթանանք թռչնաբուծական ընկերության կանոնադրության հետ. ձեռք բերենք ցեղային հավեր ու ձուեր։ Ինչպես են բազմացնում ընտանի թռչուններին մասնավոր և կոլլեկտիվ տնտեսությունները։ Հարցնենք ագրոնոմին, թե ի՞նչպես է շինվում կանոնավոր հավաբունը։ Ավագ ընկերների ոգնությամբ շինենք կուտի և ձու, թուխս դնելու տեղերը։ Սովորենք հավերին կատարելագործված ձևով խնամելու և բազմացնելու միջոցները։ |
| | 4. Ոգնենք ավագ ընկերներին անտառի որ կազմակերպելու գործում։ | Ի՞նչ նշանակություն ունի անտառը գյուղի համար։ Ի՞նչ կարգով պետք է կտրել անտառը։ Ի՞նչ նշանակություն ունի անտառը մարդու առողջապահության համար։ Ի՞նչ և ինչ տեսակի ծառեր կան մեր անտառում և՞ ինչպես է ոգտագործում մարդը։ Պլակատներ պատրաստենք անտառի որվա համար։ Անտառի որը կազմակերպելու մեջ մասնակից դարձնենք մեր ծնողներին և դպրոցից դուրս մնացած յերեխաներին։ Ծառեր տնկենք դպրոցի բակում, գյուղի խոպան հողերում, գետերի ափերին, հասարակական հրապարակներում, բակում։ Պահպանենք, վոր անասունները չփչացնեն։ |
| | 5. Մասնակցենք Մայիսի մեկի տոնին։ | Ի՞նչպես է տոնվում Մայիսի մեկը բուրժուական յերկրներում և մեզ մոտ— խորհրդային յերկրներում։ Ինչու՞ յեն հալածում բանվորներին և ինչու՞ յե արգելված Մայիսի մեկի տոնը բուրժուական յերկրներում։ Մայիսի մեկը միջազգային պրոլետարիատի որն է։ Խորհրդային Միության բանվոր դասակարգն ոգնում է բոլոր յերկրների պրոլետարիատին։ Ոգնենք չքավոր յերեխաներին։ |



| Գլխավոր թեմաները | Պրոեկտներ | Մշակելի նյութը |
|---|---|---|
| 6. Տարեկան հաշվառքը։ | | Տարվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվառքը։ (Ինչ լսեց և ըմբռնեց յերեխան բնության յերևույթների, գյուղատնտեսության բարձրացման, հասարակական փոխհարաբերությունների մասին)։<br>Ինչ սոցիալական ունակություններ ձեռք բերեց տարվա ընթացքում — կոլլեկտիվ, հասարակական-ոգտակար աշխատանք, առողջապահական և այլն։ Ինչ ունակություններ ձեռք բերեց գրել-կարդալու և հաշվելու բնագավառներում։ |
| 7. Ամառնային աշխատանքների ծրագիրը։ | 1. Ոգտագործենք ամառը առողջության ամրապնդելու համար։<br>2. Պայքարենք գյուղի հին կենցաղի մնացորդների դեմ։<br>3. Մասնակցենք ազգաբնակության (կոլլեկտիվ և մասնավոր տնտեսություններ) ամառնային աշխատանքներին։<br>4. Կռվենք դաշտի, բանջարանոցի և այգիների վնասատուների դեմ։ | |

# III ԽՄԲԱԿ

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| I. Միջազգային յերիտասարդության օրը։ | 1. Անցկացնենք միջազգային յերիտասարդության օրը։ | Ինչպես են ուզում անցկացնել միջազգային յերիտասարդության օրը մեր դպրոցի պիոներական և կոմյերիտմիության կազմակերպությունները։ Ծրագիր կազմենք, թե ինչպես պետք է մասնակցենք մենք։<br>Բանվոր դասակարգի յերեխաների կացությունը կապիտալիստական յերկրներում։ Մանուկների դպրոցական կյանքը մեզանում և արտասահմանում։ Ինչպես է կապիտալիստական յերկրներում յերիտասարդությունը պայքարում ազատության համար։ Կապ հաստատենք այլ յերկրների աշխատավոր յերեխաների հետ։ Յերիտասարդության Կոմմունիստական ինտերնացիոնալը։ |
| | 2. Ոգնենք չքավոր յերեխաներին։ Ուժեղացնենք «Մանուկների բարեկամների» ընկերությունը։ | Յերեխաների խնամազրկության պատճառները։ Ով և ինչպես է աշխատում չքավոր և անխնամ մանուկների համար։ Մանկատներ, կյանքն ու աշխատանքը մանկատներում։ Կապ հաստատենք մանկատան հետ (նրանց հետ տանենք հասարակական-ոգտակար աշխատանքներ, ցերեկույթներ, յերեկույթներ կազմակերպենք և այլն)։ Ծանոթանանք «Մանկան բարեկամներ» ընկերության աշխատանքների հետ։ Պարզենք թե ինչով կարող ենք ոգնել նրան։ |
| II. Խմբակի կյանքն — աշխատանքն ու կազմակերպությունը։ | 1. Վերսկսենք մեր խմբակի կազմակերպությունների աշխատանքները։ Վերսկսենք աշխատանքները դպրոցական տնտեսության մեջ։ | Կարգավորենք խմբակի սենյակը (դասարանը) կարասին և դասական պիտույքները։<br>Ի՞նչ կազմակերպություններ ունեյինք անցյալ տարի։ Ի՞նչ թերություններ նկատեցինք նրանց աշխատանքների ժամանակ և ինչպես պետք է ուղղենք այն։ Համաձայն նոր աշխատանքների և ինչ |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | կազմակերպություններ պետք է ստեղծենք։<br>Ի՞նչ աշխատանքներ է կատարել ընկերների այն խումբը, վորին հանձնված էր դպրոցական հողամասի հոգսը ամառվա ամիսներին։ Բաժանվենք ոդակների և կատարենք մնացած աշխատանքները։ |
| | 2. Մեր մասնակցությունը ընդհանուր, պարտադիր ուսումն անցկացնելու մեջ։ | Պարզենք, արդյոք մեր գյուղի դպրոցական հասակի բոլոր յերեխաները ընդգրկված են դպրոցում թե վոչ։ Միջոցներ ձեռք առնենք, վորպեսզի և վոչ մի մանուկ դպրոցից դուրս չմնա։ Շրջենք ընտանիքները, ցուցակներ կազմենք։ Պարզենք թե ինչ պատճառով յերեխաներին դպրոց չեն ուղարկում։ Ոգնենք, վորպեսզի նրանք ապահովվեն հագուստով, կոշիկներով և դասական պիտույքներով։ Պահանջենք կոլտնտեսությունից, վորպեսզի դպրոցականների համար նախաճաշ կազմակերպվի։ |
| III. Ամառվա աշխատանքների հաշվառքը։ | 1. Կոմյերիտների և պիոներների հետ ինչ ոգնություն ցույց տվինք կոլեկտիվ և մասնավոր տնտեսություններին։ | Աշխատանք պիոներական և կոմյերիտական կազմակերպություններում (ինչպես հաճախեց ժողովներին, ի՞նչ հանձնարարություններ կատարեց, ի՞նչ առաջարկներ արեց, ինչ արեց իր ինիցիատիվով)։<br>Պիոներ կոլեկտիվի և կոմյերիտմիության առաջադրությամբ ում ինչ աշխատանք եր հանձնարարված (ոգնություն կոլտնտեսություններին և չքավոր գյուղացիներին, ցանքերի քաղհան, խուրցեր բարձել, բանջարեղեններ, մրգեր հավաքել և այլն։<br>Վորչափ իրականացրինք ծրագրով նախատեսնված աշխատանքները։ Ի՞նչպիսի աշխատանքներին անմիջական մասնակցություն ունեցավ յերեխան։ Ո՞գնեց թե վոչ կոլտնտեսությանը, չքավոր գյու- |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | ղացուն, այրիներին, կարմիր բանակայինների ընտանիքներին և այլն։ Ի՞նչպես եր կազմակերպված ընդհանուր աշխատանքը, միասնական-խմբակային, ողակային, անհատական։ Վո՞րչափ մասնակցեցին այս աշխատանքներին մանկական կազմակերպություններից դուրս մնացած գեղջուկ յերեխաները։ Ի՞նչ վերաբերմունք ուներ հասարակությունը դեպի մանկական աշխատանքը։ |
| | 2. Հին կենցաղի ի՞նչ մնացորդներ կան գյուղում և ի՞նչպես ենք պայքարում նրանց դեմ։ | Ի՞նչ միջոցներով եյինք պայքարում գյուղում տիրող սնոտիապաշտության դեմ։ Հեղեղի և յերաշտի դեմ ի՞նչ ագրոնոմիական միջոցներ են գործադրվել (անտառի պահպանություն, նոր տունկեր, առուներ անցկացնել (ջրածիններ), հողի պատարտացում՝ հակառակ գյուղացիության մեջ տարածված սնոտիապաշտության։ Կարկուտի դեմ թնդանոթներ և հրթիռներ (ագրոնոմիական միջոցներ)։<br>Ի՞նչպես եր կոմյերիտմիությունը պայքարում սնոտիապաշտության դեմ. զրույցներ, կինոցենիրովկա, բարձրաձայն ընթերցանություն, պատի թերթ, ղեկավարություն «Անաստված» խմբակների և այլն։ Կոմյերիտների դրդմամբ ո՞վ լըծվեց անաստվածների բջիջի աշխատանքներին (ագրոնոմ, բժիշկ, ուսուցիչ և այլն)։<br>Ի՞նչ հանձնարարություններ եյինք կատարում մենք, աջակցենք զրույցների կազմակերպմանը, մասնակցում բեմադրություններին, պատի թերթին։ Ո՞ւմնից եր բաղկացած անաստվածների միությունը։ Ի՞նչ թիվ եյին կազմում չքավորները, կանայք, ծերերը և յերիտասարդները։ |
| | 3. Վո՞րչափով կատարեցինք բժշկի և ու- | Վո՞րքա՞ն և ի՞նչ բովանդակությամբ գըրքեր կարդաց յերեխան ամառվա ընթաց- |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | սուցչի խորհուրդները՝ ամառվա ջուրը, օդը, արևը լավագույն կերպով օգտագործելու նկատմամբ։ | քում։ Դրանցից վո՞րոնք տպավորություն թողին և ինչո՞ւ։<br>Ի՞նչ բերք է հավաքված (ցորեն, գարի, յեգիպտացորեն և այլ։ Ի՞նչ է մնացել հավաքելու։ Հացահատիկներ հավաքելու բարդ գործիքներ ու մեքենաներ— հնձելու և կալսելու։ Ի՞նչ նյութերից են շինված այս գործիքները (յերկաթ, պողպատ, չուգուն)։ Գործիքների և մեքենաների կառուցվածքի և աշխատանքների մասին տեղեկություններ (պարզ ձևով)։ |
| IV. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ | 1. Մասնակցենք հացամթերման կամպանիային։ | Ի՞նչ առավելություններ ունի մեքենաներով ու գործիքներով կատարած հունձը ձեռքով հնձածի հանդեպ։ Վո՞րտեղից ենք ստանում և ո՞վ է պատրաստում գյուղատնտեսական գործիքները։ Ի՞նչպես պետք է պահվեն ձմեռը գործիքներն ու մեքենաները, վորպեսզի չժանգոտվեն ու չփչանան։<br>Ծրագրենք, թե ի՞նչ մասնակցություն կարող ենք ունենալ յեգիպտացորեն բանջարանոցներ, խաղող հավաքելու աշխատանքներում, ինչպես և գինի պատրաստելու մեջ։<br>Կապ հաստատենք պտուղներից և բանջարեղեններից պահածո պատրաստող գործարանների հետ։ Ծանոթանանք, թե ինչպես են վերամշակում նրանք պտուղներն ու բանջարեղենները։ Ի՞նչ տեսակ մեքենաներ և գործիքներ են գործածում, ի՞նչ ույժերով են շարժվում մեքենաները։<br>Պարզենք թե վորչափ հացամթերք պետք է հանձնի մեր գյուղը կառավարությանը։ Խնդրենք քաղաքից յեկած բրիգադին զեկուցել հացամթերման կամպանիայի մասին և աջակցենք նրան հացամթերման աշխատանքներում, վորպեսզի կամպանիան հարյուր տոկոսով իրականանա։ Ազգաբնակության վո՞ր մասն է դեմ այդ կամպանիային և ի՞նչու։ |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | 2. Աշնանացանն ոգտագործենք գյուղի համատարած կոլեկտիվացման համար։ | Լոզունգներ և պլակատներ պատրաստենք։ Ցերգեր պատրաստենք կարմիր քարավանին մասնակցելու համար։<br>Գյուղի մակերևույթը (ցածր և բարձր հարթություններ, տափաստան, լեռներ)։ Դաշտավայրերի կլիման և հողը (ավազահող, կավահող, սևահող)։ Ավազահողի, կավահողի հատկությունները, բերքի համար վոչ պետքական լինելը։ Ի՞նչ բույսեր են աճում այսպիսի հողի վրա։ Հողի կազմությունն ու նշանակությունը բերքը ավելացնելու համար։ Բարձրավանդակի և լեռնային շրջանների կլիման ու հողը։ Լեռնային հողի հեշտ ու արագ մաշումը։<br>Գյուղի կլիման. մեր գյուղի քամիները։ Ի՞նչպես է ազդում այս կամ այն քամին ցանքսի վրա։ Մթնոլորտային տեղումներ։ Տարվա վո՞ր յեղանակին ավելի շատ տեղումներ են լինում։ Ի՞նչ պատճառներով տեղումների չափն ավելի յե մեծանում։ Անձրև, ձյուն, սրանց նշանակությունը գյուղատնտեսության մեջ։ Մեր գյուղի բնական, կուլտուրական բույսերը։<br>Մարդ, մարդու առողջությունը համաձայն տեղի և կլիմայի։ Մարդը, վորպես բնական ույժերը հնազանդեցնող ու վերամշակող։ Գետերի ոգտագործումը։ Վոռոգման առուներն ու ջրանցքները։ Հիդրոկայաններ, գետը՝ վորպես շարժիչ ույժ, տեղափոխության միջոց (տրանսպորտ)։ Ջրամբարներ, պատնեշներ և այլն։<br>Մթնոլորտային յերևույթների դեմ պայքար. ուժեղ քամիների դեմ պայքարելու համար անտառներ են տնկում, պահպանում, ցանքսերի ու այգիների շուրջը բարձր ծառեր են տնկում։<br>Ի՞նչպիսի ծրագիր եյին կազմել տեղա- |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | կան կուսկազմակերպությունն ու իշխանությունը գարնանացանի կամպանիան անցկացնելու համար։ Վե՞րչափ պետք է մեծանար ցանքսերի տարածությունը անցյալ տարվա հետ համեմատած և ի՞նչ կուլտուրայի վրա հատուկ ուշադրություն դարձնեյին։ Ի՞նչ միջոցներ պետք է ձեռք առնեյին բերքի քանակը մեծացնելու համար։ (Գյուղատնտ. կատարելագործված գործիքներ, բարձր տեսակի սերմացու, ընտրությունն ու զտումը, հողի պարարտացումը, դեղումը, շարքացան և այլն)։<br>Ի՞նչ հատուկ հանձնարարություններ եյին գրված կոլ. և խորհ. տնտեսությունների վրա։<br>Վե՞րչափ իրականացրին այս ծրագիրը կոլտնտեսությունը, գյուղն ու դպրոցը և ի՞նչ ծրագիր ունեն աշնանացանի կամպանիան անցկացնելու համար։<br>Ի՞նչով պետք է աջակցի մեր դպրոցը կոլլեկտիվ և մասնավոր անտեսություններին աշնացանի կամպանիայում։<br>Գյուղի վո՞ր տարրերն են (չքավոր և միջակ գյուղացիներ, կոլտնտեսություն) աջակցելու աշնանացանի կամպանիային և ի՞նչպես։ Սերմացու, գյուղատնտեսական կատարելագործված գործիքներ, լծկաններ, կոնտրակտացիա և այլն։ Ո՞վ չի աջակցելու (կուլակ) այս կամպանիային և ի՞նչու։ Ոգտագործենք մոտակա կոլլեկտիվի որինակը և համոզենք մեր ծնողներին կոլլեկտիվի անդամներ դառնալու, ցույց տանք նրանց կոլլեկտիվ տընտեսության առավելությունները անհատականի հանդեպ։<br>Ի՞նչպես կազմա-կերպենք (գյուղի հետ միասին) բերքի և կոլլեկտիվիզացիայի որը։ Ի՞նչ ցուցադրենք ցուցահանդեսին |

| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | (բերքի տեսակները՝ օրինակներ), այլ գործիքներ, վորոնցով մշակվել եր հողը, աշխատանք և կազմակերպություն ցույց տվող դիագրամներ և բերքի որվա համար կատարած մեր աշխատանքները)։<br>Ի՞նչպես պետք ե կազմակերպենք ցուցահանդեսը, վորպեսզի և վոչ մի ընկեր անմասնակից չմնա այդ աշխատանքներին և ամենքս կատարենք մեզ վրա դրված պարտականությունները։<br>Ի՞նչ հարցեր կարող ենք պարզաբանել մենք և ի՞նչ զեկուցումներ պետք ե կազմակերպվեն ազգաբնակության համար։ |
| | 3. Ծանոթանանք կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների կազմակերպության հետ։ | Մեր գյուղի տնտեսությունների քանակը։ Թույլ և ուժեղ տնտեսությունների քանակը։ Գյուղացիներից քանիսը չքավոր են և վո՞րքան միջակ տնտեսության տեր գյուղացիներ ունենք։ Կուլակների թիվը։ Ո՞վ ե համարվում չքավոր գյուղացի և ո՞վ միջակ։ Ո՞վ ե կուլակը, ի՞նչպես ե կուտակում նա իր հարստությունը (վարձու աշխատավորից, լծկաններ և գործիքներ վարձով տալուց և այլն)։ Ի՞նչու յենք պայքարում կուլակների դեմ։ Գյուղացիության միացումը կոլտնտեսություններին և կուլակի, վորպես դասակարգի լիկվիդացիան։<br>Դպրոցի մասնակցությունը կուլակների դեմ մղվող պայքարում։<br>Հողատիրության կարգը հնում և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Գյուղատնտեսական հարկը և սրա բաշխումն ազգաբնակության մեջ։ Չքավոր գյուղացին բոլորովին ազատ ե այս հարկից։ Կուլակը յենթակա յե անհատական հարկի։ Միջակ գյուղացու համար կան արտոնություններ։<br>Հողը մշակելու և օգտագործելու ձևերը |



| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | — անհատական, կոլլեկտիվ (միացյալ ուժերով հողի մշակում, մեքենայական ընկերություններ, գյուղատնտեսական արտելներ և կոմմունաներ)։ Մեքենա-տրակտորական կայանների նշանակությունը գյուղատնտեսության կոլլեկտիվացման գործում։ Ո՞ւմ համար ե կոլտնտեսությունը։ Կեղծ կոլլեկտիվներ և պայքար նրանց դեմ։ Խորհրդային տնտեսություններ, սրանց եյությունն ու խնդիրները։ Ի՞նչպես են կազմակերպվում խորհտնտեսությունները, վո՞րն ե սրանց նպատակը, ի՞նչ միջոցներով են հասնում սրանք խոշոր արդյունքի։ Նմանությունները և տարբերությունները կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների միջև։<br>Կոլլեկտիվ և խորհրդ. տնտեսությունների առավելությունները անհատական տնտեսության հանդեպ։ Աշխատանքը կազմակերպելու ձևը, արդյունքի աճումը։<br>Գյուղատնտեսական մեքենաներ։ Սրանց աստիճանական զարգացումը (շարժիչներ կենդանի ույժով, շոգիով, և յելեկտրականությամբ), սարքավորումը և աշխատանքը։ Ի՞նչ գործիքներ ունենք մենք և ելի ի՞նչ տեսակների կարիք ունենք մենք։ Ո՞վ ե ավելի հեշտությամբ ձեռք բերում նոր, կատարելագործված գործիքներ (կոլլեկտիվ և խորհրդ. տնտեսությունները)։ Ի՞նչպես ե այս բանում օգնում, աջակցում խորհրդային իշխանությունը կոլլեկտիվ և անհատական տնտեսություններին։ |
| V. Հոկտեմբերյան օրերը։ | | Բանվորների կռիվը թագավորի և կապիտալիստների դեմ։ Փետրվարյան հեղափոխությունը. Լենինի դերը այս կռվում։ Բանվորների հաղթանակը հոկտեմբերամսում և բանվորա-գյուղացիական կար- |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | դերի հաստատումը։ Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքները։ Բանվորագյուղացիական մասսաների կուլտուրական առաջադիմության արագ տեմպը, արդյունագործության լայն ինդուստրացումն և պլանայնությունը։ Գյուղական մանր, անհատական տնտեսությունների կոլլեկտիվիզացիան և կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների կազմակերպումը. (գյուղի սոցիալիստական սեկտորի ուժեղացումը)։<br>Կուսակցական և կոմյերիտմիության տեղական կազմակերպությունները ինչ ծրագրով են ուզում կազմակերպել հոկտեմբերյան տոնախմբությունը։ Մեր մասնակցությունն այդ հանդեսին։ Դպրոցի կողմից ընտրված ընկերներ ընդհանուր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար։ Ընտրություն զանազան հանձնաժողովների (դասարան զարդարող, բեմադրություն կազմակերպող, դրոշակներ, պլակատներ կազմող և այլն)։ Զեկուցողի ընտրություն, դպրոցի ցերեկույթին և յերեկույթին ծնողներ, կոլտնտեսության անդամներ և գործարանի բանվորներ են հրավիրվում։ Պիոներական ֆիզկուլտուրական խմբակի ելույթը ընդհանուր ցույցի ժամանակ և այլն։ Մըրցում ֆիզկուլտուրական այլ խմբակի հետ։<br>Կարմիր բանակը. Նրա դերը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն ու նվաճումները ամրապնդելու գործում։ |
| VI. Մեր ռայոնը։ | 1. Ի՞նչ կազմակերպություններ (կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ) են ղեկավարում սոցիալիստական շինարարությունը մեր ռայոնում։ | Մեր ռայոնի սահմանները, մակերեվույթը, գետերը, սրանց օգտագործումը։ Կլիման, հողը, բույսերի տեսակները։ Տնտեսության ինչ ճյուղեր են զարգացած, սրանցից վորոնք են հիմնականները և ինչ ապագա ունեն։ |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Ռայոնի շինարարությունը։ Ճանապարհներ և սրանց դերը տնտեսության զարգացման գործում։ Սրանց տարբեր տեսակները — յերկաթուղի, խճուղի, գյուղական ճանապարհներ և այլն։ Ի՞նչ է պետք, վոր սրանք ավելի կանոնավորվեն, լավանան։ Դպրոցի մասնակցությունն այդ բանում։<br>Ջրի նշանակությունը մարդու համար։ Խմելու ջուրը (ինչով են տարբերվում իրարից աղբյուրի, ջրհորի և գետերի ջրերը) սրա մաքրության նշանակությունը։ Ջրմուղ, բաղնիսի և սրա նշանակությունն առողջապահության համար։ Դպրոցի մասնակցությունը ջրհորների և աղբյուրների մաքրությունը պահպանելու գործում։<br>Սննդի և հագուստի նշանակությունն առողջապահության համար։ Սննդի չափը և կանոնավոր սննդի նշանակությունը։ Այս կամ այն ուտելիքի սննդատվությունն ու բաղկացուցիչ մասերը։ Զանազան կերակրների գործածությունն ու նշանակությունը (բույսեր, շաքար, միս) տարբեր յեղանակներում։ Վոգելից խմիչքների, ծխախոտի և խաշխաշի գործածության վնասակարությունը։<br>Հագուստ ըստ յեղանակների (բուրդ, բամբակ, մետաքս, վուշ և այլն)։ Հագուստի գույնի նշանակությունը։ Տաքության հաղորդում և հագուստի առողջապահությունը։<br>Ի՞նչ տեսակ բնակարաններ կան մեր ռայոնում։ Ի՞նչ նյութերից են կառուցված նրանք։ Այս կամ այն շինարարական նյութի առավելությունները։ Օդի չափը (նորմա) բնակարանում։ Ի՞նչպիսի պետք է լինի նորմալ բնակարանը։ Բնակարա- |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | նի տաքացումը և տաքացնելու տեսակները (կենտրոնական, յելեկտրական և այլն)։ Բնակարանի եվոլյուցիան (աստիճանական զարգացումը). Հոգս ազգաբնակության առողջապահության համար. հիվանդանոցներ, ամբուլատորիաներ, բժշկական կետեր, ծծկեր մանուկներին սննդելու և խնամելու կոնսուլտացիաներ։ Դեղատուն և ապահովագրական դրամարկղ։ Վո՞րքան են բավարարում այս հիմնարկությունները ազգաբնակության պահանջներին։ Պայքար տարափոխիկ հիվանդությունների դեմ։ Մալարիա, սրա վնասները, սրա դեմ պայքարելու միջոցները։ Պայքար հին ձևի—«տնային» դեղերի և բժշկությունների դեմ։<br>Կուլտ-կրթական աշխատանքները մեր ռայոնում։ Ի՞նչ տիպի և աստիճանի դըպրոցներ կան մեր ռայոնում։ Ի՞նչ դրության մեջ է ընդհանուր ուսման խնդիրը։ Դպրոցի չքավոր աշակերտության վո՞ր մասն է ավարտում դպրոցը և վորը հեռանում ժամանակից առաջ։ Վո՞րչափ ապահով է դպրոցը կահավորումով, դասական և այլ պիտույքներով։ Ո՞ւնի դպրոցը չքավոր աշակերտներին օգնելու ֆոնդ և վո՞րչափ ուղիղ է օգտագործվում։<br>Ի՞նչպիսի աշխատանքներ են տանում մեր ռայոնի խրճիթ-ընթերցարանները և վո՞րքան ուղիղ են տարվում այդ աշխատանքները։ Բարձրաձայն ընթերցանություն լրագրների. իրավաբանական օգնություն, պատի թերթ, թերթերի և հանդեսների տարածում։ Վո՞րչափ կանոնավոր են ղեկավարում սրանք զանազան կամպանիաները (ցանքսի, աշխատանքի դիսցիպլինայի, սոցմրցակցության, փոխառությունների, ընտրական և այլն)։ |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | ինչպես և հեղափոխական տոնակատարությունները։ Ի՞նչքան անգրագետ կա մեր ռայոնում (սրանցից կին). արդյոք ամենքն են սովորում լիկկայաններում և յեթե վոչ ինչ է պատճառը։ Ինչ կուլտուրական հիմնարկություններ կան մեր ռայոնում (թատրոն, կինո, ակումբ), և ի՞նչպես են աշխատում սրանք։<br>Ռայոնի կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները (կուսակցական և կոմյերիտմիության կոմիտեներ, մանկական կոմմունիստական դաստիարակության կազմակերպությունների բյուրոներ և բջիջներ) նրանց գաղափարական ղեկավարությունը (յերիտասարդության կոմդաստիարակության, գյուղատնտեսության ռեորգանիզացիայի և դասակարգային գիծն անցկացնելու ասպարեզում)։<br>Խորհրդային օրգաններ. գյուղխորհուրդ, ռայգործկոմ, միլիցիա, դատարան և այլն։ Ո՞վքեր են ընտրում խորհուրդներ, ո՞վքեր են զրկված ընտրելու իրավունքից։ Ի՞նչպես են ընտրում խորհուրդները։ Խորհրդի իրավունքներն ու պարտականությունները։ Խորհրդի սեկցիաները (կուլտ-կրթական, գյուղատնտեսական և այլն), նրանց նպատակն ու աշխատանքները։<br>Ո՞վ և ինչպես են ընտրում գործկոմ։ Գործկոմի նախագահությունը (նախագահ, անդամներ, քարտուղար), սրա իրավունքներն ու պարտականությունները, շինարարական աշխատանքները, կուլտուրական հիմնարկությունների ցանցի լայնացումը, շրջանի բարեշինությունը, ճանապարհներ շինելու հոգսը և այլն։ Դըպրոցական հիվանդանոցների շենքերի կա- |

| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | ուցումը, գյուղատնտեսական միջոցառումները (կատարելագործված մեքենաների ու գործիքների, բարձր վորակի սերմացվի, վնասատուների դեմ պայքարելու միջոցների մատակարարում և այլն)։ Գյուղատնտեսական տուրքի կանոնավոր (դասակարգային գծով) բաշխումը, գյուղատնտեսության կոլլեկտիվիզացիա և այլն։ Հեղափոխական կարգը պահպանող միլիցիայի իրավունքներն ու պարտականությունները, հեղափոխական արդարադատությունը պաշտպանող օրգան — ժողովրդական դատարանն և նրա իրավունքներն ու պարտականությունները։<br>Հասարակական հիմնարկություններ. կոոպերատիվ, նրա տարբեր տեսակները (գյուղատնտեսական, սպառողական, վարկային և այլն). սրանց դերը գյուղի կոլլեկտիվիզացիայի գործում։ Գյուղկոմն ու բատրակական կոմիտեն, նրանց պարտականությունները դասակարգային ուղիղ գիծ անցկացնելու գործում։<br>Ի՞նչ մասնակցություն կարող ենք ունենալ մեր ռայոնի կուլտշինարարական աշխատանքներին։ Դպրոցական կարիքների և խնդիրների քննությունը աշկոմի և հասարակական մասսայական ժողովների առաջ։ Հեռու տեղերից դպրոց հաճախող աշակերտների համար հարմարություններ ստեղծելու խնդիրը, չքավոր աշակերտներին հագուստով և դասական պիտույքներով ապահովելու խնդիրը։ Ընտանիքների սանիտարական դրությունն ուսումնասիրող և առողջապահական ունակությունները ընտանիքները տեղափոխող սեկցիաների ընտրությունը։<br>Ի՞նչ պետք է անենք, վոր մեր ընկեր- |



| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
| --- | --- | --- |
| | | ներն ընտանիքներում կարողանան զբաղմունքի և առանձին պառկելու հարմարություններ ստանան։ Կոմյերիտմիության բջջի աջակցությամբ ցուցակագրենք դըպրոցից դուրս մնացած մանուկներին, ավագ ընկերների հետ միասին լիկվիդացիայի յենթարկենք նրանց անգրագիտությունը, պիոներ-կազմակերպությունների հետ միասին ուսումնասիրենք նրանց ընտանեկան-առողջապահական պայմաններն և դպրոցական աջակից կոմիտեյի միջոցով համապատասխան օգնություն ցույց տանք նրանց։ Մեր մասնակցությունը խորհուրդների ընտրություններին, քանդված կամուրջների փչացած ճանապարհների վերանորոգության, գյուղատնտեսական միջոցառումներին, ինչպես և պատի թերթերի լույս ընծայելում և անհրաժեշտ զեկուցումներ կազմակերպելու աշխատանքներին։ Աշխատանքների կանոնավոր բաշխումը ընկերների միջև (վոչ մեկը չպետք է ծանրաբեռնվի և ամեն մեկը պետք է մասնակից լինի ընդհանուր աշխատանքներին)։<br>Պայքար ռայոնում գոյություն ունեցող յեկեղեցական տոների դեմ։ Գումարել ծնողական ընդհանուր ժողովներ և ավագ ընկերների միջոցով պարզել այդ տոների ծագումը։ Վորոշումներ հանել, վոր վոչ մի դպրոցական չպետք է մասնակցի այդ տոներին, և վոչ մեկը այդ տոներին չպետք է բացակայի դըպրոցից։<br>Մեր ռայոնի հնգամյա պլանն ուսումնասիրող խմբակ կազմակերպենք և աջակցենք այդ պլանի իրականացմանը։ |
| VII. Լենինյան օրերը։ | | 1905 թ. հեղափոխությունն ու նրա պատմական պատճառները։ 1904 թվի պա- |

| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | տերաղմը Ճապոնիայի հետ, Թույլ կապեր բանվորության և գյուղացիության միջև և այլն։ Բանվորների դիմումը Ցարին պետիցիայով ու նրանց պահանջները։ Գապոնը, որպես կառավարության ագենտ։ Բանվորների գնդակահարությունը։ Խորացում դասակարգային գիտակցության։ Հետաքրքիր պատկերներ Լենինի հեղափոխական կյանքից։ Կարծիքների տարբերություններ ու տարաձայնություններ սոց.-դեմոկր. կուսակցության մեջ։ Մենշևիկների անջատումը։ Լենինի մահը 1924 թ. նրա թաղումը Մոսկվայի մավզոլեյում։ |
| VIII. Քաղաքը, որպես սոցշինարարության ղեկավար։ | 1. Ի՞նչպես են պայքարում գործարանային բանվորները քաղաքն ու գյուղը սոցիալիստական հիմքերով վերակառուցելու համար։ Մասնակցենք այդ աշխատանքներին։ | Քաղաքի բնակարանները, տրանսպորտը (տրամվայ, ավտոմոբիլ, աերոպլան) լուսավորություն, հեռախոս, ջրմուղ, կանալիզացիա և վարչական հասարակական հիմնարկություններ։ Կուլտուրական հիմնարկությունների (տարբեր աստիճանի դպրոցներ, թատրոններ, կինո, բանվորական ակումբներ և այլն) աշխատանքները։ Մանր արհեստներ, առևտուր, ֆաբրիկա-գործարաններ։<br>Մոտակա քաղաքի ֆաբրիկա-գործարանները։ Ո՞ւմ են այսօր պատկանում ֆաբրիկա-գործարանները։ Ֆաբրիկա-գործարանների սարքավորումն ու մեքենա-գործիքները. Ի՞նչ ուժով են աշխատում մեքենաները։ Աշխատանքի ի՞նչ պայմաններ գոյություն ունեն գործարաններում։ Բանվորների նյութական կացությունը։ 7—8 ժամյա աշխատանքի օրը։ Աշխատանքի բաժանումը։ Աշխատանքի դիսցիպլինան և կազմակերպությունը։ Սոցմրցակցություն, հարվածայնություն, բրիգադներ։ Սանիտարական-առողջապահական պայմաննե- |



| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | րը։ Տեղական ֆաբգործկոմներ։ Աշխատանքների պայմանների պահպանությունը, ապահովագրումն, բժշկական օգնություն և այլն։ Բանվորների կուլտուրական կացությունը. պայքար անգրագիտության դեմ, ակումբների և թատրոնների աշխատանքները. գրադարան-ընթերցարաններ, խմբակներ, դեկուցումներ, բանվորների առաջքաշումը պատասխանատու աշխատանքների։ Բանվորական բնակարանների շինարարությունը։ Կուսակցական աշխատանքները։ Կամավոր ընկերությունները (Գյուղի և քաղաքի կապի, Մոպրի և այլ ընկերություններ)։ Բանվորների կենցաղը, դասակարգային գիտակցությունը, ինտերնացիոնալ, հակակրոնական ձգտումները։<br>Կնոջ և յերիտասարդության աշխատանքի պահպանության պայմանները. ֆաբրիկա-գործարաններին կից մինչդպրոցական հասակի մանկական հիմնարկությունները (մանկական մսուրներ, պարտեզներ և այլն)։ Աշխատանքի պայմանները կապիտալիստական շրջանում— ցածր աշխատավարձ, բանվորական որվատևողությունը, աշխատանքի վատ պայմանները։ Աշխատանքի անտանելի պայմաններ կանանց և յերիտասարդության համար։ Բանվորների իրավազրկությունը։<br>Քաղաքի և գյուղի միջև կապ հաստատելու անհրաժեշտությունը։ Ի՞նչ է պահանջում քաղաքի արդյունագործությունը գյուղից — հում նյութ (բամբակ, բուրդ, վառելիք, շինարարական և այլ նյութեր)։ Եվ ի՞նչ է մատակարարում գյուղը քաղաքին։ Զանազան մթերքներ՝ հացահատիկներ, մսացու կենդանիններ, կաթ, պտուղներ և այլն։ |

| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Ի՞նչ է պահանջում գյուղը քաղաքից — գյուղատնտեսական գործիքներ, մանուֆակտուրա, աղ, շաքար և այլն։<br>Ի՞նչից կախում ունի գյուղատնտեսության զարգացումը (կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների զարգացումը, բարդ, կատարելագործված գործիքների կիրառումը գյուղատնտեսության մեջ), իսկ այս բոլորը հնարավոր է միմիայն արդյունագործությունը զարգացնելուց հետո)։ Ի՞նչ բաներ և ի՞նչ միջոցներով է գյուղը քաղաքից ստանում դպրոցների, գրադարանների և կուլտուրական այլ հիմնարկությունների համար անհրաժեշտ պարագաներ (գրքեր, լրագրներ, ամսաթերթեր, տեղեկություններ և այլն, փոստի, հեռագրի և ռադիոյի միջոցով)։<br>Ի՞նչ է պահանջվում և ի՞նչ միջոցներով կարող ենք ուժեղացնել գյուղի և քաղաքի կապը։ Կապ գյուղի և քաղաքի միջև։ Գյուղի և քաղաքի կապի ընկերության բջջի աշխատանքի ուժեղացումը։ Կապ քաղաքի և գյուղի դպրոցների միջև։ Ի՞նչ պետք է անենք, որպեսզի մեր դըպրոցը ստանա գործարաններից անպետքացած մեքենա-գործիքները։ |
| XI. Փետրվարի 25 ու Կարմիր բանակի օրը։ | | Վրաստանի խորհրդայնացումը 1921 թվին։ Վրաստանի անջատումը Ռուսաստանից, մենշևիկյան իշխանության ժամանակ։ Պատերազմներ Ադրբեջանի և Հայաստանի հետ։ Գյուղացիության դըժգոհությունները ու ապստամբությունը։ Ոսեթի ավերումը։ Ի՞նչ տվեց Վրաստանին խորհրդային իշխանությունը (կառավարության ղեկը բանվորներին և գյուղացիներին, ֆաբրիկա-գործարանների և հողի ազգայնացումը, արտադրության |



| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | (քաղաքում) և գյուղատնտեսության (գյուղում) արագ աճումը, կուլտուրական առաջադիմություն, գործակցություն, հաստատուն կապ և հավասարություն ազգությունների միջև)։<br>Կարմիր բանակը, որպես բանվորի և աշխատավոր գյուղացու աջակից սոցշինարարության մեջ, ինչպես և բանվորա-գյուղացիական առաջին պետության պաշտպան։<br>Ծանոթանանք Կարմիր բանակի կենցաղի հետ։ Կապ հաստատենք դպրոցի և կարմիր զորանոցի միջև։ |
| X. Գարնանացան։ | Քաղաքի բանվորությունն օգնում է գյուղին։ Սովորենք նրանցից գյուղատնտեսական գործիքներով աշխատել։ | Ձյունի հալը։ Գետերի վարարումն ու տված վնասները (ցանքսերի և անտառների վողողում, փչացում և այլն), ինչպես և տված օգուտները (տիղմ է բերում, իսկ սա պարարտացնում է հողը)։ Ի՞նչպես են մարդիկ օգտագործում վարարած գետերը՝ Վառելիքի և շինարարական նյութեր են պատրաստում, տեղափոխում. հորդ անձրևներ. սրանց ազդեցությունը լեռնային վայրերի վրա (հողի քանդում, մաշում, տեղափոխում) կավահողերի վրա ճաքեր գոյացնում և այլն։<br>Մալարիայի տարածման պատճառները։ Հողը, որպես բույսեր սնող, մեծացնող։ Այս կամ այն բույսի պահանջած հողի տեսակները։<br>Բույսի աճման պայմանները (տաքություն, օդ, խոնավություն)։<br>Հող մշակելու կանոններ։ Հողի պարարտացում (մոխիր, հանքային պարարտանյութեր և այլն)։ Սերմացվի ընտրություն, զտում, գեղում, շարքացան և այլն։<br>Գարնանային աշխատանքների տեսակները այգում, դաշտում և այլն։ |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Վարելու կատարելագործված միջոցները — տրակտոր, վորպես լծկան (քաշող ույժ)։ Ի՞նչով ենք աշխատեցնում տրակտորը և վորտեղից ենք ստանում վառելանյութը։ Ի՞նչ գլխավոր մասերից է բաղկացած տրակտորը. Անասուններով քաշող գութանի հետ համեմատած, վո՞րչափ ավել է վարում տրակտորը (որական)։<br>Սերմազտիչ, նրա հիմնական մասերը, մի ժամվա ընթացքում քանի՞ կիլոգրամ սերմացու յե մաքրում, ի՞նչ առավելություններ ունի և վորչափ վորակով և քանակով բարձր է սերմազտիչի միջով անցկացրած սերմացուն նահապետական ձևով մաքրած սերմացվից։<br>Շարքացան մեքենա. Նրա կառուցվածքն ու աշխատանքը։ Շարքացանի առավելությունները ձեռքով ցանածից։ Ո՞վ և վորտեղ են պատրաստում այս մեքենան։<br>Ո՞վ է ոգնում կոլլեկտիվ և անհատական տնտեսություններին այս մեքենաների գործածելու գործում։ Քաղաքից յեկած բանվորական բրիգադներ։ Ծանոթանանք նրանց աշխատանքի հետ և խնդրենք մեզ էլ ծանոթացնեն մեքենաների հետ։ Ոգնենք նրանց այնպիսի աշխատանքներում, վո՞րպիսին կարող ենք հաղթահարել մենք։<br>Բույսի մասերն ու նրանց նշանակությունը։ Արմատ, վորպես հողից սնունդ հավաքող և վորպես բույսին պահող։ Արմատների տեսակները։<br>Տերևն ու նրա նշանակությունը։ Բուն, վորպես սննդամուղ խողովակ (սնունդ անցկացնող)։<br>Ծաղիկ, նրա բեղմնավորման միջոցները (միջատ, քամի)։ |



| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | Բանջարանոցի և այգու վնասատուներն ու բարեկամները։ Պայքար վնասատուների դեմ։ |
| | 2. Կազմակերպենք սերմացու զտող և դեղող բրիգադներ։ | Ինչու համար ենք զտում սերմացուն։ Զանազան բույսերի սերմը սերմացվի մեջ և նրանց վնասակարությունը։ Դպրոցական հողամասի վրա յերկու ածվի վրա փորձենք ցանել մեկի վրա զտված և մյուսին՝ չզտած սերմացուն։ Ի՞նչ նշանակություն ունեցավ սերմացվի զտումը։ Բաժանվենք բրիգադների, աշխատանքը բաժանենք բրիգադների միջև (կցվենք զանազան թաղերին), սոցմրցակցության կանչենք մոտակա գյուղի դպրոցի յերրորդ խմբակի աշակերտներին։<br>Ի՞նչ միջոցներ են գործածվում սերմացուն դեղելու համար։ Դեղված սերմացուի հետևանքները։<br>Խնդրենք գյուղատնտեսին զեկուցել, թե ինչպես պետք է դեղվի սերմացուն և ինչ մասնակցություն կարող ենք ունենալ այդ աշխատանքներին։ |
| | 3. Մշակենք և որինակելի դարձնենք մեր դպրոցական հողամասը։ | Բանջարանոցի համար տեղի ընտրություն, հողամասը մշակելու ծրագիր։ Բարձր կամ ցածր ածուներ, ըստ հողամասի խոնավության։ Պարարտացման նյութի չափն ու տեսակը ըստ բանջարեղենների և հողի պահանջի։ Ստուգել թե վորքան պետքական է կամ անպետք սերմացուն։ Ցանելու ժամանակն ու կարգը։ Ջերմանոցներից շիթիլների տեղափոխումը բանջարանոցի ածուները։ Ավելորդ շիթիլները պետք է տալ գյուղացիներին Ի՞նչպես պետք է հետևել շիթիլներին։ Ցանքսի վոռոգումն ու տունկ տեղափոխելու կարգը։<br>Մեր շրջանի անտառը։ Ծառերի տե- |

| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | 4. Պահպանենք ու անկենք անտառներ։ (Անտառի օրը)։ | սակները (փշատերև և սաղարթավոր)։ Կարծր (կաղնի, հոնի և այլն) և փափուկ ծառերի տեսակները։ Անտառը, վորպես հողի խոնավություն պահպանող և աղբյուրներ ու գետեր սնող։ Անտառը, վորպես օդը մաքրող, վորպես հողը մաշվելուց պահպանող։ Բույսերի կռիվը խոնավության և լույսի համար։ Բույսերի գոյության կռիվը։ Անտառի վնասատուները։ Անտառի տված օգուտները մեր ռայոնին. շինարարական նյութերը, վառելիք և այլն։ Ի՞նչ ծրագրով են ուզում անցկացնել Անտառի օրը մեր շրջանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունները (փչացրած, հրդեհած անտառների վերականգնումը)։ Վար ու ցանքսի համար անպետք սարի լանջերի վրա պետք է փշատերև անտառ տնկել։<br>Գետերի ափին, դպրոցական բակում, համայնական հրապարակներում պետք է ծառեր տնկել։ Առուներ շինել։ Պարարտացման նյութերի և ցիցերի անհրաժեշտությունը։ Ավագ ընկերների աջակցությամբ անտառի նշանակության մասին զեկուցումներ կազմակերպել ազգաբնակության համար։ Դպրոցական պատերից դուրս մնացած յերեխաներին մասնակից դարձնել անտառը պահպանելու գործին։ |
| XI. Մայիսի մեկը՝ միջազգային բանվորության օրը։ | | Ի՞նչպես էյին տոնում բանվորները Մայիսի մեկը միապետության ժամանակ։ Ի՞նչպես են տոնում այսօր մեզ մոտ՝ խորհրդային իշխանության ժամանակ և ինչպես բուրժուական յերկրներում։<br>Կոմմունիստական ինտերնացիոնալը, վորպես բոլոր յերկրների բանվորության միացնող։ Յերիտասարդության միջազգային ինտերնացիոնալ։ Լենին — Կոմինտերնի հիմնող։ |



| Գլխավոր թեմաները | Նախադծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| XII. Դաշտերի, այգիների, բանջարանոցների վնասատուներ։ Պայքարենք նրանց դեմ։ | | Կարգի բերենք մեր բանջարանոցը. խնամքը, քաղհանը, վոռոգելը և այլն։ Բանջարանոցի վնասատուները, կաղամբի թրթուրը և այլն։ Այգու կարգավորումը գարնան ամիսներին՝ խնամել, մաքրել, դեղ սրսկել և այլն։<br>Դիմենք գյուղատնտեսին և խնդրենք սովորեցնի մեզ, թե ինչպես պետք է պայքարենք այգիների և դաշտերի վնասատուների դեմ։ Բրիգադներ կազմենք և օգնենք գյուղացիների ամառվա աշխատանքներին։ |
| XIII. Տարեկան աշխատանքների հաշվառքը։ | | Ի՞նչ աջակցություն և օգնություն ցույց տվինք տարվա ընթացքում կոլտնտեսություններին և գյուղացիներին։ Ի՞նչ նոր, բարելավված ու կատարելագործված միջոցներ կիրառեցինք գյուղատնտեսության մեջ։<br>Ի՞նչպես խորացրինք մեր ունակությունները ու գիտելիքները բնության յերևույթների շուրջը։<br>Վո՞րքան պարզ յեղավ մեզ, աշակերտներիս համար գյուղի դասակարգային խմբավորումը։<br>Համեմատած անցյալ տարվա հետ, վո՞րքան խորացրինք կոլլեկտիվ, ինտերնացիոնալ, առողջապահական և այլ ունակությունները։<br>Ի՞նչ նվաճումներ ունեցանք գրելու, կարդալու և հաշվի մեջ։<br>Հաշվառքի համար ընտրենք հանձնաժողովներ. ցուցահանդես և ինսցենիրովկա։ Զեկուցողների, թեմաների ընտրություններ և այլն։<br>Աշխատանքների (տարվա ընթացքում կատարած) կարգավորումը։ Նկարներ, պլակատներ, դիագրամներ և այլն։<br>Կազմակերպենք տարեկան աշխա- |

| Գլխավոր թեմաները | Նախագծային թեմաները | Մշակելի նյութը |
|---|---|---|
| | | տանքների ցուցահանդես, հրավիրենք կուսակցական և խորհրդային կազմակերպություններին ու ազգաբնակությանը։ |
| XIV. Ամառային աշխատանքներ։ | 1) Հնար յեղածին չափ և ինչքան կարելի յե ավելի լավ օգտագործենք ամառվա բնությունը մեր առողջությունն ուժեղացնելու համար։ Այս նույն ունակություններին վարժեցնենք դպրոցական պատերից դուրս մնացած յերեխաներին։<br>2) Պիոներների և կոմյերիտների հետ միասին մասնակցենք գյուղի կուլտուրական և հասարակական աշխատանքներին.<br>3) Եքսկուրսիա կազմակերպենք դեպի քաղաքի ֆաբրիկաները և հրավիրենք տեղի յերեխաներին կոլտնտեսության կյանքի և աշխատանքների հետ ծանոթացնելու համար։ | |



# IV ԽՄԲԱԿ

## Ա. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Վերտեղ և ինչպես անցկացրինք այս ամառը։ Ի՞նչ մասնակցություն ունեցանք կոլտնտեսության աշխատանքներին։ Գյուղատնտեսական ինչ ճյուղ է ընտրել մեր գյուղի կոլեկտիվը։ Ի՞նչպես է աշխատանքը բաժանված կոլեկտիվի մեջ։ Ի՞նչպես է հաշվառնված ամեն մի աշխատանք, ինչպես կոլեկտիվը բաժանեց բերքը իր անդամների միջև։ Ի՞նչ մասնակցություն ունեցանք կոլտնտեսության շինարարության մեջ։ Ի՞նչպես կազմակերպվեց հացամթերումը աջող կերպով անցկացնելու պատրաստությունները։ Քաղաքից յեկած բրիգադները։ Ազգաբնակության ընդհանուր ժողովները։ Այս ժողովների վորոշումները։ Մոտակա քաղաքի բանվորության աջակցությունը հացամթերքներ ժողովելու մեջ։

Ո՞վ եր խոչընդոտներ հարուցանում հացամթերման կամպանիայի դեմ. կուլակների պրովոկացիաները, հակախորհրդային տարրերի գործունեությունը, միջոցներ նրանց դեմ։

Քանի ցենտներ հացահատիկ հանձնեց մեր գյուղի կոլեկտիվը հացամթերման կազմակերպություններին։ Իսկ ինչքան պետք է հանձներ։ Լրիվ կատարեց ծրագիրը։ Ինչ ապրանք կամ այլ բան ստացավ գյուղացին հանձնված հացատիկի դիմաց։

Ծանոթանանք հացամթերման ծրագրի հետ։ Աջակցենք վոր մթերածը գերակշռի ծրագրին։ Հետևենք լրագրներին, թե ինչպես է հացամթերման կամպանիան տարվում ամբողջ Միության մեջ։

Նկարագրենք ամառվա տպավորությունները։ Լույս ընծայենք պատի թերթ և մեր դպրոցի այլ խմբակի աշակերտների հետ միասին հաշվառման ցուցահանդես կազմակերպենք։

Տոնենք միջազգային յերիտասարդության որը։ Կապ հաստատենք արտասահմանյան ընկերների հետ։

### Թեմա 1. Խ. Ս. Հ. Միություն

1. Ուսումնասիրենք Խորհրդային Միությունը՝ սոցշինարարության յերկիրը։ Ծանոթանանք նրա ֆիզիկո-աշխարհագրական պայմանների հետ։

Խորհրդային Միության դիրքը, սահմանները։ Խորհրդ. Միութ. բաղկացուցիչ հանրապետությունները՝ Ռ. Ս. Ֆ. Հ., Ուկ. ՍԽՀ., Բելոռուս. ԽՍՀ, Ուզ. ՍԽՀ, Թուրքմենիստ. ՍԽՀ, Տաջիկիստ. ՍԽՀ, Անդրկովկ. ՍՖԽՀ։ Անդրկ. ֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունները՝ Ադրբեջան, Հայաստան, Վրաստան։ Վրաստանի ավտոնոմ հանրապետությունները՝ Աբխազական և Աճարստանի ավտոնոմ հանրապետություններն ու Հար. Օսեթի ավտոնոմ շրջանը։ Սրանց փոխադարձ կապն ու բարձրագույն մարմինները։ Ինչու յե Անդրկովկասյան հանրապետությունը «ֆեդերատիվ» կոչվում։ Ինչ ազգու-

թյուններ են ապրում Անդրկովկասյան հանրապետության մեջ։ Ի՞նչպիսի յե այս ազգությունների փոխհարաբերությունները — կապը։ Ինչու յե Խորհրդային Միությունը «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն» կոչվում։

Խորհրդային Միության մեծագույն հովիտներն ու լեռնաշղթաները, օվկիանոսները, ծովերը, լճերը, գետերը, կլիմայական գոտիները, հողը։ Անդրկովկասյան ՍՖԽ Հանրապետության մակերևույթը, խոշորագույն լեռնաշղթաները, գետերը, լճերը։ Վրաստանի մակերևույթի բազմազանությունը, գլխավոր լեռները, դաշտավայրերը՝ ցածր հարթությունները, ձորերը։ Լեռների և ցածր հարթությունների ազդեցությունը կլիմայի վրա։ Տարբեր կլիմաները Վրաստանում. սրա պատճառները։ Մթնոլորտային տեղումները, սրա չափը տարբեր վայրերում։ Վրաստանի լեռների հավերժական ձյունի սահմանները։ Սառցադաշտեր. Վրաստանի գետերը, սրանց ընթացքը (ուղղությունը) և ակունքների բարձրությունները։ Վրաստանի գետերի բնորոշումը։ Պարզենք նրանց նշանակությունը սոցշինարարության համար։

Ջուրը, վորպես շարժիչ ույժ։ Ի՞նչ գետեր են օգտագործվում ելեկտրոկայանների համար Խորհրդային Միության մեջ։ Նշանակենք քարտեզի վրա Խորհրդային Միության խոշորագույն ելեկտրոկայանները։ Վրաստանի ֆիզիկո-աշխարհագրական բաժանումը։

Կովկասյան լեռնաշղթան Վրաստանում։ Հովիտներն ու հարավային լեռնաշխարհը։ Պարզենք Խորհրդային Միության կլիմայի տարբերության պատճառները։

Խորհրդային Միության բաժանումը յերկու գոտիների՝ — սև և վոչ սև հողային շրջանները։ Հողի տեսակները զանազան շրջաններում։

Բույսեր և կենդանիներ Վրաստանի տարբեր տեղերում, սրանց տեսակները՝ համաձայն բնական պայմանների։ Պարզենք թե ինչ տեսակ է մեր դպրոցի բանջարանոցի հողը։ Պարզենք թե ինչ տեսակ բույսեր կարող են ավելի աջող զարգանալ այդ հողամասի վրա։ Դպրոցական բանջարանոց ստեղծենք։

## 2. Հոկտեմբերյան հեղափոխություն

Ուսումնասիրենք Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները։ Մասնակցենք հոկտեմբերյան օրերի տոնակատարությանը։

Բանվորների և գյուղացիների դրությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ։ Ազգային թշնամություն ցարիզմի ժամանակ։ Ազգությունների ճնշումը, աշխատանքի պայմանները միապետության ժամանակ։ Բանվորների և գյուղացիների ապստամբությունները։ Ցարական կառավարության կռիվը նրանց դեմ։

Արդյունաբերության զարգացումը ցարական Ռուսաստանում և բանվորության դասակարգային ինքնագիտակցության աճումը։

Հեղափոխական շարժման սկիզբը։ 1905 թվի հեղափոխությունը Ռուսաստանում և Վրաստանում։ Լենինի դերը 1905 թ. հեղափոխության մեջ։ 1905 թ. հեղափոխության պարտությունն ու սրա պատճառները։ Պատժիչ արշավախմբերն ու աշխատավոր ժողովրդի հալածանքը Վրաստանում։ Սև հակահեղափոխության շրջանը։ Յեկեղեցին, վորպես կալվածատերերի, կապիտալիստների և ցարի սպասավոր ընդդեմ աշխատավորության։ 1914 թ. համաշխարհային իմպերիալիստակ. պատերազմը։ Համաշխարհային պատերազմի պատճառները. ում օգուտ բերեց այդ պատերազմը։ Ո՞վ եր աջակցում պատերազմին, ինչու Լենինը պատերազմի դեմ եր։ Բոլշևիկյան կուսակցությունն ընդդեմ պատերազմի։



Ի՞նչ զոհեր տվեց համաշխարհային պատերազմին, ինչ վնասներ հասցրեց համաշխարհային տնտեսությանը (ծանոթացեք համապատասխան թվերի հետ)։

Ի՞նչ ազդեցություն ունեցավ համաշխարհային պատերազմը աշխատավոր մասսաների դրության վրա — համաշխարհային պատերազմը տարվում եր ի հաշիվ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության։

Համաշխարհային պատերազմն ու հեղափոխական շարժման վերակենդանացումը։

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը — միապետության անկումը։ Հեղափոխության մասնակցող դասակարգերը։ Բանվորների և գյուղացիների պահանջները։ Իշխանությունը բուրժուազիայի ձեռքին։ Բանվորների և գյուղացիների դրությունը սրանով չբարելավվեց։ Բուրժուազիայի տիրապետությունը մենշևիկների ղեկավարությամբ։ Բանվորական, գյուղացիական և կարմիր բանակայինների խորհուրդների համագումարը։

Հոկտեմբերյան հեղաշրջում բոլշևիկների ղեկավարությամբ։ Իշխանությունը հանձնվում է խորհուրդներին։ Խորհրդային իշխանության առաջին դեկրետները (խաղաղության, հողի, ֆաբրիկա գործարանների և բանկերի ազգայնացման մասին) Կարմիր բանակի ստեղծումը, կռիվ ներքին հակահեղափոխության դեմ։ Հակահեղափոխության պարտությունը Ռուսաստանում։

Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից։ Անդրկովկասի բաժանումը առանձին հանրապետությունների։ Մենշևիկների իշխանությունը Վրաստանում։ Բանվոր դասակարգի և չքավոր ու միջակ գյուղացիության դրությունը մենշևիզմի ժամանակ։ Գյուղացիական ապստամբությունները։ Մանրամասն ծանոթանալ Դուշեթի ապստամբության հետ։ Բանվորության գործադուլները։ Ազգային թշնամության զարգացումը։ Հարավ-Օսեթի սարսափները։ Մենշևիկյան կառավարությունը վոտնատակ է տալիս բանվորների և գյուղացիների պահանջները։

Վրաստանի խորհրդայնացումը 1921 թ.։ Ստեղծվում են Աբխազական, Աջարստանի և Հարավ-Օսեթի ավտոնոմ հանրապետությունները։

Խորհրդային իշխանության օրգանները. տեղական իշխանության օրգանները—շրջանային խորհուրդ և գործկոմ։

Խորհուրդների համագումար (բարձրագույն մարմին), կենտր. գործադիր կոմիտե, ժող. կոմիսարների խորհուրդ — առանձին կոմիսարիատներ։

Այս օրգանների կազմակերպության կարգը և նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Կոմունիստական կուսակցությունը ՀԿԿ (բ) վորպես ղեկավար Հոկտեմբերյան հեղափոխության: Կոմկուս,—վորպես աշխատավորության ղեկավար ավանգարդ:

Կոմկուսի բջիջ — ռայոն. կոմիտեներ, Կենտր. Կոմիտե և Կենտր. Վերստուգիչ Կոմ.:

Ծանոթանանք մեր գյուղի կոմբջջի աշխատանքների հետ: Լենինը Կոմկուսի առաջնորդ:

Յերիտասարդության կոմունիստական կազմակերպություններ (կոմյերիտական և պիոներական կազմակերպություններ): Նրանց նպատակն ու խնդիրները: Յերիտասարդության Կոմ. Ինտերնացիոնալ (Յե. Կ. Ի. КИМ): Մասնակցենք հոկտեմբերյան տոներին, կազմակերպենք մեր աշխատանքի ցուցահանդես:

### 3. Ծանոթանանք Խորհրդային Միության տնտեսա-արդյունաբերական և արտադրական կենտրոնների հետ:

Տնայնագործությունը Վրաստանում: Տնայնագործության տեսակները: Տնայնագործության տեսակները Խորհրդային Միության տարբեր հանրապետությունների մեջ: Ֆաբրիկա-գործարանների արագ աճման անհրաժեշտությունը: Մեր յերկրի տնտեսության ինդուստրացման անհրաժեշտությունը: Կուսակցության և իշխանության ձեռք առած միջոցները ծանր արդյունաբերության զարգացման գործում: Հնգամյա պլանը: Ինդուստրացման փոխառությունն ու նրա նշանակությունը: Աջակցենք, «Հնգամյակը չորս տարում» փոխառության տարածմանը: Ծանոթանանք արդյունաբերության զարգացման հնգամյա պլանի հետ:

Գարգենք թե՞ ինչ ցումարներ են կանխատեսնված հնգամյա պլանում ֆաբրիկա գործարանային արդյունաբերությունը զարգացնելու համար (մահուդի, մետաքսի, ծխախոտի, կաշվի, շինարարական նյութերի և այլն:) Աշխատանքի պայմաններն ու աշխատանքի պաշտպանության կանոնները մեր ֆաբրիկաներում ու գործարաններում: Յոթժամյա աշխատանքի օրը, սոցիալիստական աշխատանքի մեթոդները — սոցմրցակցություն, հարվածայնություն և այլն: Մենք էլ սոցմրցակցության հրավիրենք դպրոցներից մեկին: Հարվածայնություն և աշխատանքի արդյունքի աճումը: Անընդհատ շաբաթ: Ֆաբրիկաներ, գործարաններ և պրոֆմիություններ: Պրոֆմիությունների դերը սոցիալիստական շինարարության մեջ:

Հանքարդյունաբերությունը Խորհրդային Միության մեջ — մարգանեց, քարածուխ, յերկաթ, պղինձ, նավթ, կրակին դիմացող կավ, բարիտ, լիտոգրաֆիական քար, կրաքար և այլն: Սրանց դասավորումը՝ Ճիաթուրա, Տղիբուլի, Տղվարչելի, Ուրալ, Դոնբաս և այլն: Քարածուխի և յերկաթի դերը ինդուստրացման գործում:

Ծանր ինդուստրիա — մեքենաշինարարություն: Տրակտորներ, մեքենա-



ներ շինող գործարանները Խորհրդային Միության մեջ. ծանր ինդուստրիան, վորպես ղեկավար սոցշինարարության: Ծանր ինդուստրիա զարգացնելու հնգամյա պլանը: Ինդուստրացման III-րդ փոխառությունը, վորպես սոցշինարարության միջոցներից մեկը: Մասնակցենք «Հնգամյակը չորս տարում» փոխառության իրացման աշխատանքներին:

Ծանոթանանք լեռնարդյունաբերության զարգացման միջոցների հետ (համաձայն հնգամյա պլանի): «Սպիտակ ածուխ» և նրա նշանակությունը սոցշինարարության մեջ: Խորհրդային Միության խոշորագույն ելեկտրոկայանները (Վոլխովստրոյ, Դնեպրոստրոյ, Զագես, Ռիոնգես և այլն): Ելեքտրականության նշանակությունը: Ելեկտրոկայանի հետ ծանոթանալու համար, դիտել մոտակա ելեկտրոկայանը:

Սարքենք ելեկտրական զանգակը: Քարտեզի վրա նշանակենք: Խորհրդային Միության աչքի ընկնող արդյունագործական քաղաքները (Մոսկվա, Լենինգրադ, Իվանովո-Վոզնեսենսկ, Ստալինո, Խարկով, Բագու և այլն):

Սոցիալիստական արդյունագործության զարգացման արագ տեմպը: Սոցիալիստական արդյունագործության աճումը աշխատավորության կյանքի բարելավման գրավականն է:

Կուրորտային շինարարությունը Խորհրդային Միության մեջ: Ծանոթանանք կուրորտային շինարարության հնգամյա պլանի հետ: Քարտեզի վրա նշանակենք Խորհրդային Միության կուրորտները:

### 4. Տրանսպորտ և առևտուր.

Խորհրդային Միության արտաքին առևտուրը (եքսպորտ և իմպորտ): Ներքին առևտուրը: Պետական և կոոպերատիվ առևտուր: Յերթևեկության միջոցներ: Տրանսպորտի նշանակությունը արտադրության զարգացման մեջ: Վրաստանի աչքի ընկնող խճուղիները: Գլխավոր յերկաթուղիները Խորհրդային Միության մեջ: Ծովագնացություն, գլխավոր նավահանգիստները: Ավիացիա և նրա դերը: Ծանոթանանք տրանսպորտի նշանակության հնգամյա պլանի հետ: Պատրաստենք շարժիչ մեքենաների և սավառնակների մոդելներ: Ծանոթանանք յերկաթուղու կայարանի և արհեստանոցի, նավահանգստի, այերոդրոմի աշխատանքների հետ:

Լենինը, միջազգային պրոլետարիատի պարագլուխ. 21 և 22 հունվարը:

Լենինի կյանքն ու գործունեությունը: Լենինի դերը բոլշևիկյան կուսակցությունը հիմնելու գործում: Լենինն ու միջազգային բանվորության հեղափոխական շարժումը: Լենինն ու յերիտասարդությունը: Հունվարի իննը: Արյունոտ կիրակի: Քահանա Գապոնը:

### 4. Ուսումնասիրենք Խորհրդային Միության գյուղատնտեսական շրջաններն ու նրանց կազմակերպությունը

Ցանքսի և հացամթերման կամպանիաների նշանակությունը խորհրդային տնտեսական և քաղաքական կյանքում: Կիրառած միջոցները մեր շրջանի բերքը բարձրացնելու գործում: Միջոցներ: Ի՞նչ միջոցներ են նշած հնգամյա պլանում մեր շրջանի բերքատվությունն ուժեղացնելու համար:

կոնտրակտացիա, նրա սկզբունքները և նշանակությունը տնտեսության համար: Ագրո և զոոմինիմում: Ի՞նչ միջոցներով են կազմվում և իրականանում:

Գյուղատնտեսական տուրքն ու սրա դասակարգային նշանակությունը: Խորհրդային իշխանության դասակարգային բնույթը (շրջանի նյութի համաձայն):

### 5. Գյուղատնտեսության ռեկոնստրուկցիա

I. Խորհրդային գյուղատնտեսության տեխնիկան. սրա յետամնաց վիճակը և կապիտալիստական յերկրների գյուղատնտեսության հանդեպ: Տեխնիկ. ռեկոնստրուկցիայի անհրաժեշտությունը գյուղատնտեսության մեջ: Մանր անհատական տնտեսությունները, վորպես խոչնդոտներ խոշոր մեքենայացրած գյուղատնտեսության դեմ: Գյուղատնտեսությունը խոշոր տնտեսությունների վերածելու յերկու ուղիները — կապիտալիստական և սոցիալիստական: Սրանց գնահատումն ու արժեքը աշխատավորական տեսակետից: Կոլտնտեսության ձևերը և սրանց կազմակերպության ուսումնասիրությունը: Կոլեկտիվիզացիա և դասակարգային կռվի խորացումը. կուլակության, վորպես դասակարգի դեմ պայքարելու ձևերը. կոնկրետ օրինակներ շրջանի կյանքից: Սոց. սեկտորի զարգացման հեռանկարները հնգամյա պլանում: Կոլտնտեսությունների թիվը, գյուղատնտեսական մեքենաների չափը, ինտենսիվ կուլտուրաներ և այլն:

## Բ. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ՄԵՋ

Ծանոթություն խորհրդային գյուղի և քաղաքի կապի նոր ձևերի հետ. ուսումնասիրել սրանց բովանդակությունը. կոոպերացիա, տրակտոր-մեքենաների կայաններն ու կոլոնները, քիմիական պարարտանյութերի գործածությունը, բանվորական բրիգադներ և այլն: Սրանցից ի՞նչը կիրառվեց մեր ռայոնում: Ի՞նչում արտահայտվեց սրանց դերն ու աշխատանքը:

## Գ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՃՅՈՒՂԵՐԸ

Սրանց զարգացման բնական անհրաժեշտ պայմանները: Գյուղատնտեսության տարբեր ճյուղերի դասավորումը բնական պայմանների համեմատ: Ի՞նչպես է կանխատեսնված սրանց զարգացման հեռանկարները հնգամյա պլանում: Գյուղատնտեսության տարբեր ճյուղերի դերը սոցշինարարության մեջ:

### 6. Վրաստանի խորհրդայնացումը — փետրվարի 25-ը

Մենշևիկների իշխանությունը Վրաստանում, գյուղացիները չկարողացան ստանալ հող, իսկ բանվորները՝ ֆաբրիկա-գործարաններ: Բանվորների և գյուղացիների դրությունը չբարելավվեց: Գյուղացիական ապստամբությունները Դուշեթում, Մեգրելիայում և այլն: Բանվորների յելույթները: Ազգամիջյան ատելության աճումը մենշևիզմի օրերին Անդրկովկասյան յեղբայրակից հանրապետությունների ազգությունների միջև: Զրնդհատվող պատերազմները Հայաստանի և Ադրբեջանի հետ: Սարաֆները Ռսեթում:



Պարզեցեք, թե ինչ նվաճումներ է ունեցել Վրաստանը 1921 թվից մինչև այսօր արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, ելեկտրոֆիկացիա, կոոպերացիա, դպրոցական շինարարություն, ազգամիջյան խաղաղությունն ու համերաշխությունը և այլն:

Նվաճումների ցուցահանդես կազմակերպենք:

Մասնակցենք փետրվարի 25-ի հանդեսին:

### 7. Կարմիր բանակը սոցշինարարության պահակն է

Ո՞վ կարող է ընդունվել Կարմիր բանակում: Բանակների տեսակները՝ հետևակ, ձիավոր, թնդանոթաձիգ, օդային, զրահապատ, ինժեներական, քիմիական, միութենական, սանիտարական մասերը:

Հետևակ զորքի միությունները — հրացանաձիգ մասը, սրա շտաբը, յերեք հրացանաձիգ հազարյակ, թնդանոթաձիգների բատարեյան, միության քանյակը, ձիավորների հետախույզ քանյակ, զինվորական քիմիական քանյակը, հայթայթող մասը — բեռնակիր:

Հետևակ զորքի զինումը: Հրձիգներ և սառը (կտրող) զենք:

Թեթև զենքեր. սվին, թեթև գնդացիրն և ռմբաձիգ, ծանոթանանք հրացանի մասերի հետ:

Ծանոթանանք թունավոր գազերի հետ, ինչ ազդեցություն ունեն մարդու վրա, ինչպես պետք է պայքարել թունավոր գազերի դեմ — դիմակներ:

Ի՞նչ բան են տանկերը: Ի՞նչից են շինվում, ինչ գլխավոր մասերից են բաղկացած, ինչպես են շարժվում, ինչ դեր է կատարում պատերազմի ժամանակ: Ցնե՞ր հնարեցին տանկերը, ինչ տեսակներ են լինում տանկերը. ինչ տարբերություններ կան «Րենո» և խոշոր «Րեկորդ» տանկերի միջև: Տանկերի շարժման արագությունը, ինչպես են կռվում տանկերի դեմ:

Կապ հաստատենք մոտակա բանակի հետ, արձակուրդ ստացած կարմիր բանակայինների և բժշկի հետ:

Կազմակերպենք ռազմական անկյունն ու ավիաքիմի խմբակը: Տոնենք Կարմիր բանակի օրը:

### 8. Մարտի 8-ը աշխատավոր կանանց միջազգային օրն է

Աշխատավոր կանանց դրությունը բուրժուական յերկրներում: Աշխատավոր կանանց դրությունը Խորհրդային Միության մեջ: Կնոջ դերը սոցշինարարության մեջ: Կնոջ դրությունը Միության հետամնաց անկյուններում՝ ճրնշում ընտանիքներում, շահագործում, փակ կյանք, չադր, ստորացուցիչ սովորություններ կանանց համար և այլն: Խորհրդային հասարակության պայքարը կանանց ազատագրության համար:

Պատգամավոր կանանց կազմակերպություն, նրա աշխատանքները: Մարտի 8-ը կանանց միջազգային օրն է: Կազմակերպենք «Կնոջ օրը դպրոցում. բաց անենք մսուր, կանանց լիկկայան և այլն:

Պայքարենք հին կենցաղի մնացորդների դեմ:

Պարզենք թե մեր ռայոնի կանայք վորչափ ակտիվ են հասարակական աշխատանքների մեջ:

9. Կուլտուրական շինարարությունը Խորհրդային Միության մեջ:

*Պարզենք թե ինչպես են տարվում անգրագիտության վերացման աշխատանքները մեր ռայոնում:*

*Պայքարենք անգրագիտության դեմ: Մասնակցենք համապատասխան օրգանների աշխատանքներին:*

*Անգրագիտության հիմնական վերացման գործը կուսակցության և կառավարության քաղաքական խնդիրներից մեկն է: Լենինի կարծիքը անգրագիտության վերացման մասին:*

*Ընդհանուր և պարտադիր ուսում: Ծանոթանանք ընդհանուր ուսուցման ծրագրի հետ: Կապ հաստատենք ընդհանուր ուսումն անցկացնող ռայոնական շտաբի հետ: Համապատասխան ագիտացիա մղենք ազգաբնակության մեջ ընդհանուր ուսման նշանակության մասին: Ոչ մի յերեխա դպրոցական պատերից դուրս չպետք է մնա:*

*Գյուղ. լուսավորության հիմնարկությունները. կարմիր անկյուն, խրճիթ-ընթերցարան, կուլտուրայի տուն, ակումբներ: Պարզենք թե ինչպես են այդ հիմնարկություններն աշխատում, ինչպես են կազմակերպված, ինչ բովանդակություն ունեն սրանց աշխատանքները: Մասնակցենք դրանց աշխատանքներին: Պրոպագանդ մղենք ակումբների անհրաժեշտության մասին: Ակումբի աշխատանքներին մասնակից դարձնենք յերիտասարդներին:*

*Կ ի ն ո. կինոյի նշանակությունը ազգաբնակության կուլտուրական աստիճանը բարձրացնելու գործում: Կինոն գյուղում: Թատրոնները Խորհրդային Միության մեջ:*

*Կապի, հաղորդակցության միջոցները. հեռախոս, հեռագիր, ռադիո: Սրանց դերը կուլտուրական հեղափոխության մեջ: Ռադիոկայանները Խորհրդային Միության մեջ: Ռադիոսիրողների խումբ կազմակերպենք: Ռադիո շինենք մեր դպրոցում: Կապ հաստատենք Ռադիոկենտրոնի հետ: Տպագրական խոսք: Տեղական և կենտրոնական լրագրեր: Պայքարենք այդ թերթերը տարածելու համար: Ծանոթանանք հրատարակչության հնգամյա պլանի հետ: Տպագրական խոսքի (մամուլի) դերը կուլտուրական հեղափոխության գործում:*

*Ժողովրդական լուսավորության ղեկավար կազմակերպությունները ռայոնում և հանրապետության մեջ:*

10. Խորհրդային Միությունն յեվ կապիտալիստական յերկրները:

*ա) Խորհրդային Միությունը, վորպես սոցիալիստական հեղափոխության դրոշակակիր ամբողջ յերկրագնդի վրա: Խորհրդային իրավակարգի ամրապնդումը և սոցշինարարությունը Միության մեջ՝ համաշխարհային սոց. հեղափոխության գրավականն է: Խորհրդային Միությունը համաշխարհային բանվոր դասակարգի հեղափոխական շտաբն է: Յերրորդ Ինտերնացիոնալն ու սրա գործադիր կոմիտեն:* Կապիտալիստական գլխավոր յերկրները:

*Բանվոր դասակարգի դրությունը կապիտալիստական յերկրներում. կոնկրետ որինակներով ցույց տալ այն հակասությունները, վոր գոյություն*



*ունեն կապիտալիստական յերկրների կարգերի և այնտեղի բանվոր դասակարգի միջև: Բանվոր դասակարգի պայքարը շահագործման դեմ:*

*Կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգն ու կոմկուսը: Ֆաշիզմ և բանվոր դասակարգը:*

*բ) Խորհրդային Միության և բուրժուական յերկրների փոխհարաբերությունները: Թշնամական ողակումը: Կապիտալիստական յերկրների կռվի միջոցները Խորհրդային Միության դեմ: Կապ խորհրդային իշխանության ներքին թշնամիների հետ. կուլակներ և այլ վնասարարներ: Ցույց տալ կոնկրետ որինակներով վնասարարության տեսակները և այն կապը, վոր գոյություն ունի ներքին թշնամիների (վնասողների) և մեր թշնամի կապիտալիստական յերկրների միջև: Նրանց ձեռք առած միջոցները սոցշինարարության դեմ խոչընդոտներ հարուցելու համար, Խորհրդային Միության պայքարը տնտեսական անկախության համար — սեփական ծանր և թեթև ինդուստրիաների զարգացման ուղիներով: Խորհրդային Միության ռազմական ուժեղացումը խաղաղության գրավականն է: Ուժեղացնենք մեր յերկրի ինքնապաշտպանությունը, աջակցենք Կարմիր բանակին Պաշ-Ավիաքիմին և այլն:*

11. Մայիսի մեկը, միջազգային պրոլետարիատի տոն է:

*Մասնակցենք մայիսի մեկի տոնին: Տարբեր ազգությունների բանվորների միության անհրաժեշտությունը կապիտալիզմի դեմ պայքարելու համար: Ո՞վ էր Կարլ Մարքսը, ինչ էր սովորեցնում մեզ — հասարակության յերկու բանակի բաժանվելը, բոլոր յերկրների բանվորության միության անհրաժեշտությունը կապիտալիստական կարգերը տապալելու համար: Ի՞նչ է նշանակում «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» լոզունգը: Առաջին Ինտերնացիոնալ. Յերկրորդ Ինտերնացիոնալ և սրա դավաճան դերը: Մայիսի մեկի տոնի ծագումը, սրա կարճ պատմությունը: Յերրորդ Ինտերնացիոնալ: Լենինի դերը Յերրորդ Ինտերնացիոնալ կազմակերպելու գործում:*

*Յերրորդ Ինտերնացիոնալը, վորպես միջազգային պրոլետարիատի ղեկավար շտաբ: Ցույց տանք Խորհրդային Միության նվաճումները ազգերի համերաշխության գործում:*

*Պարզենք թե ինչպես են բանվորները տոնում Մայիսի մեկը կապիտալիստական յերկրներում:*

*Կազմակերպենք Մայիսի մեկի հանդեսը: Կապ հաստատենք տարբեր ազգությունների դպրոցների աշակերտության հետ: Անդամագրվենք «Մոպր»-ին:*

12. Յերկրագունդ:

*Պարզենք թե խորհրդային Միությունն յերկրագնդի վոր մասն է կազմում: Ծանոթանանք յերկրագնդի, վորպես տիեզերքի մարմիններից մեկի հետ: Յերկրագնդի ձևը — էլիպսոիդ. Նրա մեծությունը (տրամագիծը), յերկրագնդի պտուտ գալը և սրա պատճառները: Յերկրագնդի պտուտ գալու հետևանքները: Գիշեր և ցերեկ, տարեշրջան: Գլոբուս և կիսագնդեր: Արևի տաքության բաշխումը (դասավորումը) յերկրագնդի վրա: Արև, Լուսին:*

*Ո՞վ էր Գալիլեյը: Ով և ինչու էին հալածում նրան:*

Նորագույն գիտության հետաքրքրությունը աշխարհագրության նվաճումներով։ Արկտիկա։ Սրա հետազոտողները։ Գեներալ Նոբիլեյի արշավախումբը. Դիրիժաբլ «Իտալիայի» ուղևորումը դեպի Հյուսիսային բևեռը 1929 թվին։ Սրա կատաստրոֆը, կորածներին գտնելու համար ձեռք առած միջոցները։ Սառցահատ «Կրասինի» ճանապարհորդությունը։ «Կրասին»-ի աջողությունները, վորպես խորհրդային գիտության խոշորագույն նվաճումներից մեկը։

Ծանոթացեք «Կրասին»-ի ճանապարհի հետ։ Հյուսիսային բևեռը, վորպես սառույցի թագավորություն։

# I ԱՍՏԻՃԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԸ

## Բացատրական մաս

Շատերը «աշխատանք» ասելով հասկանում են միայն ձեռքի աշխատանք և ուրիշ վոչինչ։ Սրանով էլ սկսվում է դպրոցական տեսակ-տեսակ արհեստանոցների զարգացումը, անկախ հանրակրթական առարկաների ծրագրերից ու կոմպլեքսներից։

Այդպես է սակայն ժամանակակից իրականության հայեցակետով։ Խորհրդային դպրոցը պետք է լինի պոլիտեխնիկական աշխատանքային։ Նա պետք է ըմբռնել տա արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական ինդուստրացման խնդիրներն ու միջոցները, ծանոթացնի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրական պրոցեսների հիմնական ձևերին, պատվաստի խելացի գործնական արտադրական ունակություններ, վարժեցնի ամեն տեսակ պարզ գործիքների ու մեքենաների գործածությանը, սովորեցնի ճանաչել հիմնական նյութերի հատկություններն ու վորակը։

Աշխատանքի այսպիսի ըմբռնումը պահանջում է սերտ կապ դպրոցի և արտադրության միջև, աշակերտների անմիջական մասնակցությունը ձեռնարկության արտադրական աշխատանքին։ Ամեն մի դպրոց՝ լինի նա քաղաքում թե գյուղում, պետք է կապ հաստատի տեղական ֆաբրիկաների, գործարանների, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների հետ։ Արտադրություն ընտրելիս առաջին հերթին պետք է աչքի առաջ ունենալ այն ճյուղերը, վորոնք խոշոր նշանակություն ունեն ժողտնտեսության մեջ, այն ձեռնարկությունները, վորոնք ավելի կատարելագործված տեխնիկական բազա ունեն, այն ձեռնարկությունները, վորոնք ավելի ինդուստրացված են։ Ահա այդպիսի խնդիր է դրված դպրոցի առաջ և նա պետք է լուծի այս խնդիրը, այս իսկ պատճառով էլ դպրոցի կապը արտադրության հետ պիտի լինի պարտադիր, ուսուցանվի և արտացոլվի դպրոցական աշխատանքներում հենց առաջին խմբից սկսած։ Բացի սրանից հենց առաջին խմբակից ուսուցման նյութի հետ պետք է շաղկապվի աշխատանքը բանվորական սենյակներում, դպրոցական արհեստանոցներում և հողամասերում։



Մեր նպատակն է առաջին աստիճանի դպրոցի համար աշխատանքի ծրագիր կազմել և օգնել ու հեշտացնել նրա ըմբռնումը։

Ծրագրի էական մասն է՝ լուսաբանել պոլիտեխնիկական դաստիարակության հիմնական խնդիրները, կապված այդ հասակի յերեխաների աշխատանքի և պարապմունքների հետ։ Պոլիտեխնիկական դաստիարակությունն առաջին տեղը դնում է աշխատանքի մեթոդը և վոչ թե մանկական աշխատանքի նյութական հետևանքները։ Քանի վոր խորհրդային դպրոցը ուսումնասիրելու յե շրջապատի ազգաբնակության աշխատանքային գործնեյությունը և մասնակցելու յե իր ուժերի չափ դրան, ապա այդ գործնեյության ու նրա աշխատանքի տեսակների ուսումնասիրությունը պետք է կազմի մեր դպրոցի բովանդակությունը։ Աշխատանքի այդ տեսակները օգտակար կլինեն վոչ միայն յերեխայի, այլ և հասարակության. մանկան աշխատանքը կունենա հասարակական արժեք։ Սակայն դպրոցն ունի նաև դաստիարակչական-կրթական նպատակ և ուրեմն աշխատանքի տեսակները պետք է ունենան մանկավարժական արժեք, համապատասխանեն մանկաբանության և մանկան հոգե-ֆիզիքական առանձնահատկություններին։ Հենց մեր նպատակն է տալ աշխատանքի այնպիսի տեսակներ, վոր համապատասխանեն մանկաբանության և սոցիալ-տնտեսական պահանջներին։ Մասսայական դպրոցի աշխատավորները աշխատանքային պրոցեսները բաժանում են հետևյալ տեսակների.

1. Ինքնասպասարկում.
2. Տնային աշխատանք (ДОМОВОДСТВО).
3. Աշխատանք արհեստանոցում.
4. Գյուղատնտեսական.
5. Հասարակական-անհրաժեշտ.
6. Ֆաբրիկա-գործարանային (յերբեմն տնայնագործական)։

Աշխատանքի գլխավոր նյութեր լինելու յեն. հողը, սերմերը, կավը, թուղթը, ստվարաթուղթը, բամբակը, թելը, կտորտանքները, յերկաթաթելը, թիթեղը, փայտը, շհոը (клейстер) և այլն։

Ամենաանհրաժեշտ գործիքներ պետք է համարել. բահը, կեռը, փոցխը, ցնցուղը, ասեղը, մկրատը, դանակը, մուրճը, ձեռասղոցը, ունելին, վրձինը, քանոնը, շաղափը։ Բանվորական սենյակի գործիքների մանրամասն ցուցակը տես ներքևը։

Պետք է գիտենալ, վոր աշխատանքի մի տեսակը կարելի յե փոխարինել մի ուրիշով, նայած տեղական հանգամանքներին, այսինքն ռայոնի կարիքներին, տնտեսական հիմնարկների պահանջներին։ Եական նշանակություն չունի, յեթե աշխատանքը կապվում է այս կամ այն նյութի հետ, կարևորն այն է, վոր աշխատանքային պրոցեսները ըստ հնարավորության ընդգրկեն բոլոր թեմաները և աշխատանքային գործնեյությունը դառնա ուսումնասիրության նյութ։ Բայց սրանից չի հետևում, թե աշխատանքը պետք է միշտ զուգընթաց ընթանա հանրակրթական թեմաներին և բոլորը ընդգրկի, քանի վոր աշխատանքային պրոցեսները ունեն իրենց մեթոդիկան

իրենց խնդիրները, ապա թեմաներ ընտրելիս այդ հանգամանքը ի նկատի պետք է առնել. աշխատանքը կարող է լիովին ընդգրկել և յետ ու առաջ ընկնել ժամանակի տեսակետից: Կարևորը աշխատանքային գործնեյության նպատակադրությունն է՝ տալ վոչ թե լոկ աշխատանքի այս կամ այն տեսակի ունակություններ, այլ գիտակցական դաստիարակություն ամբողջական աշխատանքի նկատմամբ, աչքից չկանելով աշխատանքային պրոցեսների հիմնական դրությունները մեթոդական տեսակետից: Պետք է ըմբռնելի դարձնել աշխատանքի սոցիալական եյությունը, սոցշինարարության այն պայքարը վոր մղում է ՍԽՀՄ, այդ շինարարության լայն պերսպեկտիվները և մոտակա խնդիրները, ինչպես Համամիության, նույնպես և տեղական մաշտաբով: Վերջապես ըմբռնել տալ այն պահանջները, վոր առաջադրվում է այդ շինարարության մասնակիցներին, մասնավորապես նոր կադրերին: Պետք է ոգնել յերեխաներին, վոր գիտակցեն թե ինչ տեղ են բռնում և ապագայում բռնելու յեն աշխատավորների հասարակության մեջ, գիտակցեն թե ինչ փոխադարձ կապ կա բնության, աշխատանքային գործնեյության և հասարակական հարաբերությունների միջև: Սրա հետ, միասին, ինչպես ասացինք, պետք է տալ աշխատանք, յերեխաների ուժերի, հասակային պահանջների և ամեն մի խմբակի ուսումնադաստիարակչական ծրագրի համեմատ:

Այստեղից պարզ է, վոր աշխատանքի պարապմունքները առաջադրում են մի շարք մեթոդական պահանջներ.

1. Դաստիարակել հասարակայնություն աշխատանքի մեջ, այսինքն գիտենալ ջոկել ու գնել կոլեկտիվ նպատակներ և կոլեկտիվորեն աշխատել, ընդհանուր աշխատանքի ծրագրներ մշակել ու աշխատանքի նպատակահարմար բաշխում կատարել, նաև դաստիարակել պատասխանատվության զգացում իր վրա վերցրած աշխատանքի հանդեպ:

2. Դաստիարակել կազմակերպվածություն աշխատանքի մեջ. այսինքն սովորել իր աշխատանքը ծրագրել, անհրաժեշտ նյութ ու գործիքներ ընտրել, պահպանել գործիքների և նյութերի դասավորության կարգը, հաշվի առնելով ժամանակը, նյութի քանակը և աշխատանքի վորակը:

3. Դաստիարակել տեխնիկական ընդունակություններ, այսինքն զարգացնել տեխնիկական գիտողականություն ու կոնստրուկտիվ ընդունակություններ: Ամեն մի առիթ ոգտագործել և ծանոթացնել ամենից պարզ մեխանիզմների և տեխնիկական խնդիրների լուծման հետ աշխատանքի ընթացքում: Ծրագրային աշխատանքների մեջ պետք է մտցնել նաև ամենապարզ մեխանիզմները և նրանց եվոլյուցիան: Բացի վորոշ թեմաների հետ կապված աշխատանքներից, վորոնց միջոցով յերեխաները կարող են զարգացնել իրենց կոնստրուկտիվ ընդունակությունները, պետք է զարկ տալ նաև ստեղծագործական բնույթ կրող աշխատանքներին:

4. Դաստիարակել տեխնիկական հմտություն, այսինքն գիտենալ գործածել ու պահպանել գլխավոր գործիքները, տնտեսաբեն ծախսել նյութերը: Դրա համար անհրաժեշտ է ամփոփել հավաքած տեղեկությունները և խըմ-



բակային կոնֆերենցիաներում քննել և վերցնել դրանից այս կամ այն գործակային կոնֆերենցիաներում... 

5. Տեխնիկական հորիզոնի ընդլայնումը ձեռք է բերվում աշխատանքի զանազան ձևերի, նյութերի տեխնոլոգիայի տարրի և գործիքների ուսումնասիրությամբ: Աշխատանքի ուսումնասիրությունը կատարում են յերեխաները բանվորական սենյակում, հողամասում, արտադրության մեջ կամ արտադրության միջոցով՝ հետազոտությամբ և էկսկուրսիաներով:

Այս հիմնական պահանջներն ընդհանուր են, ինչպես քաղաքի, նույնպես և գյուղի համար:

Մի քանի կազմակերպչական դիտողություններ: Դպրոցը նորմալ պայմաններում պետք է ունենա բանվորական սենյակ և հողամաս: Այդ բանն իրագործելու համար պետք է աշխատանքի քաշել յերեխաներին, խորհրդային հասարակայնությունը և ռայոնի տնտես. հիմնարկները: Չպետք է մոռանալ, վոր արժեքավոր կապիտալ է յերեխաների և հասարակության եներգիան, նախաձեռնությունը, միայն դպրոցը պիտի լինի նախաձեռնող և ուղղություն տվող:

Պարապմունքների ժամը բանվորական սենյակում և հողամասում, յեթե գտնվում է խմբավարի ձեռքին, ապա կախված է նյութի մոտեցումից և դասատուն կարող է կարճել ու ընդարձակել աշխատանքի ժամանակը: Յեթե աշխատանքը գտնվում է ուրիշ դասատուի ձեռքին, ապա պարապմունքները պետք է կատարվեն վորոշ որերին, հաշվելով վոչ պակաս 8 ժամ ամիսը մի աշակերտին: Նորմալ պայմաններում բանվորական սենյակը կարող է անցկացնել քան աշակերտից վոչ ավել:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՀԱՎՈՐԱՆՔԸ 20 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

| №№ | Առարկաներ | Չափեր | Քանակը |
|---|---|---|---|
| 1. | Փակ պահարան . . . . . . . | մեծ չափի վորոշ նյութեր պահելու համար . . . . . | 2 |
| 2. | Ապակե դռներով պահարան . . | միջին չափի գործիքներ պահելու համար . . . . . | 1 |
| 3. | Զանազան դարակներ . . . . | շինվածքների համար . . . . | 5 |
| 4. | Արկղներ զանազան պետքերի համար . . . . . . . . . | | 4 |
| 5. | Լվացարան . . . . . . . . . | փոքր չափի . . . . . . . . | 1 |

| №№ | Առարկաներ | Չափեր | Քանակը |
|---|---|---|---|
| 6. | Դազգյաններ (վերստակ) . . . | փոքր չափի . . . . . . . . | 2 |
| 7. | Սեղաններ ռանդելու համար . | (հյուսնի դազգյահ) . . . . . | 4 |
| 8. | » սովորական . . . . | 2x1x0,85 մետր . . . . . . . | 2 |
| 9. | Տաբուրետներ . . . . . . . | 0,35x0,35x0,45 մետր . . . . | 16 |
| 10. | Զուգահեռ մամլակ (տիսկ) . . | միջին չափի . . . . . . . . | 4 |
| 11. | Փայտի անկյունաչափ . . . . | | 4 |
| 12. | Ձեռասղոց . . . . . . . . . | փոքր . . . . . . . . . . . | 6 |
| 13. | Աղեղնասղոց . . . . . . . . | կտավի յերկար. 50 — 70 սմ. . | 5 |
| 14. | Սոսնձաման . . . . . . . . | փոքր չափի . . . . . . . . | 4 |
| 15. | Ռանդա . . . . . . . . . . | 5x6 ք. x 20 սմ. յերկար . . . | 5 |
| 16. | Շերխեբել . . . . . . . . . | 4x5x15 սմ. . . . . . . . . | 2 |
| 17. | Գայլիկոն (коловорот) . . . . | | 1 |
| 18. | Կենտրոնավոր ծակիչ (сверло) . | 3/8. 1/2. 3/4. 7/8. . . . . . | 10 |
| 19. | Տորվիչ (рашпиль) . . . . . . | 10 և 6, . . . . . . . . . | 2 |
| 20. | Խարտոց խոշոր փշերով . . . | 10 և 6 . . . . . . . . . . | 16 |
| 21. | » մանր » . . | 6 — . . . . . . . . . . . | 3 |
| 22. | Գամփոր (стамеска) տափակ . | 1/2. 5/8. 7/8. I. I 1/2. . . . | 10 |
| 23. | Գամփոր աղեղնաձև . . . . . | 1/2. 7/8. . . . . . . . . | 2 |
| 24. | Դուր զանազան տեսակի . . . | 1/4. 3/8. 1/2. . . . . . . . | 3 |
| 25. | Լոբզիկ (Նրբասղոց) . . . . . | 4 3 . . . . . . . . . . . | 3 |
| 26. | Մուրճ . . . . . . . . . . | 100 գր., 200 գր. և 400 գր. . | 8 |
| 27. | Աքցան . . . . . . . . . . | փոքր չափի . . . . . . . . | 1 |
| 28. | Տափակբերան (զարադին) . . | փոքր . . . . . . . . . . . | 4 |



| №№ | Առարկաներ | Չափեր | Քանակը |
|---|---|---|---|
| 29. | Կլորբերան . . . . . . . . . | » . . . . . . . . . . . . | 2 |
| 30. | Լարահատ (кусачки) . . . . . | | 4 |
| 31. | Կալիչ (струбцы) . . . . . . | զանազան չափերի . . . . . | 5 |
| 32. | Խառատային սղոց . . . . . | | 1 |
| 33. | Մետր . . . . . . . . . . . | ծալովի հասարակ և սանտ. . | 6 |
| 34. | Թիթեղահատ մկրատ . . . . | փոքր չափի . . . . . . . . | 2 |
| 35. | Սովորական մկրատ . . . . . | թիթեղի — 4 հատ, թղթի և կտորի 12 հատ . . . . | 16 |
| 36. | Մաթխափ (ծակիչ) дрель . . | փոքր . . . . . . . . . . . | 1 |
| 37. | Շաղափ . . . . . . . . . . | » . . . . . . . . . . . . | 3 |
| 38. | Բիզ (հերուն) . . . . . . . | | 3 |
| 39. | Ռեյսմուս . . . . . . . . . | | 1 |
| 40. | Ֆիննական դանակ . . . . . | | 5 |
| 41. | Կոշկակարի դանակ . . . . | | 5 |
| 42. | Հեսանաքար (սրաքար) . . . | տրամագիծը 50 սմ. . . . . . | 1 |
| 43. | Հեսան կամ սրոց . . . . . . | | 1 |
| 44. | Անկյունաչափ յերկաթե . . . | | 3 |
| 45. | Ստվարաթղթե դանակ . . . . | | 5 |
| 46. | Ցայլց - քանոն . . . . . . . | | 2 |
| 47. | Կարիչ . . . . . . . . . . . | փոքր . . . . . . . . . . . | 1 |
| 48. | Կարելու դազգյահ . . . . . . | | 2 |
| 49. | Մանրատամ ձեռնասղոց . . . | | 1 |
| 50. | Ոսկրիկ . . . . . . . . . . | | 5 |
| 51. | Քրքրիչ . . . . . . . . . . | | 4 |

# I ԽՄԲԱԿ

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| Գոտիներ, պայուսակներ, ամանեղեն և ցանկացած առարկաներ: | Կավ պատրաստելն ու պահելը. միայն մատներով ծեփել մի ամբողջական կտորից: | Փոքրիկ թիակներ, փոքրիկ տախտակ (մաղ), դույլ, սրկղ, տախտակներ: | Կավ և նրա հատկությունները. կրաչուն, փխրուն, պինդ, խոնավ, չոր, թանձր, ջրալի. զանազան գույնի կավեր: |

**Պարտադիր նախկուսակա բուսի յեվ պղյուսի գործարանը**

**Աշխատանք կտորեղենի հետ**

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| Նախաձաշի, գործիքների, պիտույքների և աշխատանքների համար տոպրակներ: | Դարձ կար. կտրել մկրատով կտորը յերկարությամբ ու լայնությամբ: | Ասեղ, մատնոց, մկրատ. նկարագրել ասեղի՝ անցք և ծայրը: | Կտորամթերներ, թելեր կարի համար. խեժ և նոր գործած կտորներ. բրդե, բամբակե և մետաքսե: Թելեր՝ պինդ, թույլ հաստ, բարակ: |

**Փայտի աշխատանքներ**

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| Ավելի, բահի կոթեր. դրոշակների ձողեր. ցցեր ծաղիկների համար, այգեւ նստարան, ցանկապատ, քամուց պտտվող խաղալիքներ, (պրոպելեր, աղացք և այլն): | Դանակով և մուրճով փայտ կտրել, տաշել և փորել դանակով, մեխ գամել, շաղափել, մասերը միացնելով խաղալիքները: | Դանակ, մուրճ, շաղափ, վրձին: Դանակի մասերը՝ բերան, կոթ. մուրճի մասերը՝ կոթ և մուրճ. շաղափի մասերը՝ շաղափ և կոթ. ուշադրություն դարձնել շաղափի կազմությանը և նրա պտտվելու հատկությանը: | 6 — 20 սմ. յերկարություն և 4 քառ. սմ. հատածով փափուկ փայտի կտորներ, բարդիներ, ձողեր, ճմանր մեխեր, ներկեր: Տեխնոլոգիական տեղեկություններ՝ ըստ լայնության կտրելը, ըստ յերկարության ճեղքելը. տաշեղներ, ծառի չոր և թաց ճյուղեր, դրանց կտրելն ու ճեղքելը: |



**Ստվարաթղթի յեվ թղթի աշխատանքներ**

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| Թելի փաթթոններ. գրքույկներ ասեղների համար. տուփեր, ծրարներ, քառակուսի տուփեր, տնակ, կաճկարաս, սանդուղք, սայլակ, յերկրաչափական լոտո: | Ամբողջ թերթից կտրել քառակուսիներ և քառանկյունիներ տրված չափերի: Թուղթ կտրել ուղիղ գծով դանակով, մկրատով ըստ մաշտաբի: Քառակուսին ծալել 16 մասի, անկյունին՝ 12: Գծագրել քառանկյունու մեջ 6 վանդակ... յերեսից և ներսից կպցնելու յեզրանակները. դումի - արաբիկ և այլն: Բարակ ստվարաթղթի կտրումը մկրատով: | Մկրատ. դանակ, վրձին նկարագրել մկրատը և բացատրել յերկար և կարճ ծայրերի նշանակությունը փորձի միջոցին, նույն նյութը կտրատելով զանազան մկրատներով: | Ալբոմի, փայլուն և չալկի (յերեսի) թղթեր. բարակ ստվարաթուղթ. դումիարաբիկ, չոր (կլեյստեր) թղթի հատկությունները՝ պինդ, կարծր, փափուկ, ճկուն, հարթ, բրդոտ, պայծառ, կաթնագույն, գունավոր, գունգզույն: Ստվարաթղթի հատկությունները՝ հաստ, բարակ, ճկուն, կոտրվող: Ստվարաթղթի և թղթի ուռչելը ջրից և անհամաչափ չորանալը. ստվարաթղթի ծծվելու հատկությունը, չերտավորումը: |

**Պոլիտեխնիկական աշխատանք II-րդ խմբակում. փայտի աշխատանքներ**

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| Մեխերով շինված փոքրիկ արկղներ (բույսերի, գրադարանի քարտերի և այլն համար): Հասարակ կաճ-կարասի, փայտի կամրջի, լաստի և ջրաղացի կաղապարներ (մոդելներ). պատգարակներ, հասարակ ճախարակ (բլոկ - ծիծեռնիկ) և այլն: | Սղոցել լայնությամբ սրկղների քանդումը, աքցանով մեխեր հանելը. տարփոչով, խարտոցով խարտոցելը. մամլակների մեջ սեղմելը, մուրճի բռնելը և կանոնավոր մեխ գամելը: | Դանակ, մուրճ, շաղափ. ձեռնասղոց, աքցան, խարտոց, մամլակներ, տարփոչ: Ձեռնասղոց՝ կոթը, սղոցը և ատամների կազմությունը: Աքցան՝ բերանը և կոթը: Տարփոչ և խարտոց. ատամները, տեսակները և գերը: | Զանազան չափի ամրելու տախտակներ մինչև 1 սմ. հաստությամբ: Շերտեր (планки) մինչև 6 սմ. լայնության և ձողիկներ 1 — 4 քռ. սմ. հատածով: 4 սմ.-ից վոչ ավել տրամագիծ ունեցող կլոր, չոր փայտիկների օգտումը. մեխեր: Գաղափար տալ կտրվածքների, միամյա օղակների և փայտեղենի տեսակների մասին: Սովորել ջոկել սոճին, յեղևնին, հաճարին (бук) և լաստենին (ольха): Վորոշել կտրվածքի մեջ յերկարությամբ մեխելու տարբերությունը: |

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնությունը | Գործիքներ յեվ նրանց նկարագրությունը | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| **Մետաղաբելերի աշխատանք** | | | |
| Փոքրիկ կեռիկներ (крючки), հանգույցներ (петля), օղակներ, ճանկեր տետրակներ կարելու համար և այլն: Կեռիկներ, հանգույցներ և օղակներ պատկերների, ծաղիկներ և այլն կախելու համար: | Ծալել զանազան անկյունի միծությամբ, աղեղնաձև և շրջանաձև ծալել. վոլորել. կտրելն ու կտրելը: | Տափակբերան, կլորբերան, լարահատներ: Նկարագրել լարահատը և նրա գործողությունը: | Ցերկաթի և պղնձի բարակ մետաղաթել 0,2-ից 1,5 մմ. տրամագծով: Տեխնոլոգիական տեղեկություններ. յեր կաթե և պղնձե մետաղաթելերի համեմատական ճկունությունը: Ցերկաթաթելի ոսկեզօծումը (ժանգոտելը): |
| **Թղթի յեվ ստվարաթղթի աշխատանքներ** | | | |
| Տուփեր, պոստարկղ, փըռկան, այերոպլան, գործիքների ձևեր, պլակատներ, տետրեր և այլն: | Գաղափար մաշտաբի մասին, յեռանկյունաչափի գործածությունը ուղիղ անկյուններ գծագրելիս. գծագրել քառանկյունի տուփեր և նրա անհրաժեշտ ձևերը: Ստվարաթղթի կտրելը անկյուններում, տառեր գծագրելը, տետրեր կարելը: | Մկրատ, դանակ, վրձին, սանտիմետրային քանոն, յեռանկյունաչափ, մետաղե անկյունաչափ, ասեղ, բիզ, կարգին: | Նյութը նույնն է, ինչ վոր առաջին խմբակում: |
| **Կարի յեվ հյուսվածքի աշխատանքներ** | | | |
| Թաշկինակ, անձեռոցիկ, փոշու սրբիչ, թաշկինակի համար զըպան, տուփիկներ: | Թեք կար, կոճակ, յերիզ (տեսմա) կարելը. շրջանաձև հյուսելը: | Մկրատ, ասեղ, մատնոց, սանտիմետր, փայտի կամ ոսկրե հելոն, ընդասեղներ: | Գործվածքներ, թելեր, բուրդ, կտորներ, կարած և հյուսած գործվածքների տեխնոլոգիան և ջուլհակային արտադրության զարգացումը: |



## Պոլիտեխնիկական աշխատանքը 3-րդ խմբակում. փայտի աշխատանքներ.

| | | | |
|---|---|---|---|
| Քառանկյունի տախտակներ ծեփի համար. պլանշետներ մակետների համար: Հասարակ դարակներ. կոթեր գամփորների, խարտոցների համար. ատամներ կախարանների համար և այլն: | Սղոցել յերկարությամբ ու լայնությամբ ցանկացած ուղղությամբ. տախտակները միացնել շրիշակների միջոցով: Ռանդել շերխեբելոր և ռանդայով փափուկ տեսակի տախտակներ. սովորել գործն ամրացնել դազգյահին: Ուղղել շերխեբելի և ռանդայի յերկաթը մուրճի հարվածներով այս կամ այն կողմը: Փափուկ և պինդ տեսակի կլոր ձեղանների ռանդելը: Դիկտի կտրատումը, լոբզիկի աշխատանքներ, շաղափել գայլիկոնով. սոսնձի յեփումը, սոսնձելը, հղկիչ թղթով մաքրելը, սոսնձով ներկելը: Աղեղնասղոցի շինելը: | Դանակ, մուրճ, շաղափիկ, ձեռնասղոց, աղեղնասղոց, աքցան, տորվիչ, խարտոց, հղկիչ թուղթ (շկուրկա) չափան, շերխեբել, ռանդա, դուր, գամփորներ, լոբզիկ, գայլիկոն, մամլուկ, դազգյահ: Պարզել ձեռնասղոցի և աղեղնասղոցի տարբերությունը և ամեն մեկի առավելությունները: Նկարագրել ռանդան՝ կոճղ, բերան, յերկաթ և նրանց դերը: Համեմատել շաղափիկն ու գայլիկոնը և պարզել նրանց առավելությունները: | Կավարներ (рейки), բարակ տախտակներ, արկղներ, դիկտեր, բաղդադներ մեխեր, ներկ-սոսինձ, վոչ հաստ կլոր ճղոտներ ամուր փայտից: Փայտեղենի, տախտակների և կավարների պատրաստումը. նրանց պահելը պահեստատեղերում, նրանց չափելը ըստ կտրվածքի և յերկարության, դիկտ պատրաստելը: Բաղդադների պատրաստումն ու գործածությունը: Ծանոթացնել մեխ պատրաստելու հետ. նրանց տեսակները, չափերի վորոշումը: Համառոտ տեղեկություն յերկաթի, պողպատի մասին և նրանց պահելը: Սոսինձ պատրաստելը, ինչ հում նյութերից է պատրաստվում և ինչ գործածություն ունի: |

## Մետաղաբելերի, թիթեղի աշխատանքներ.

| | | | |
|---|---|---|---|
| Զամչաներ ընդեղենների համար, չամչա աղբի համար, բահեր և այլն: Մետաղաթելի | Մկրատով թիթեղ կտրելը, ծայրերը վոլորել, գծել թիթեղի վրա ուզած ձևը, թիթեղը ծակել մե- | Մկրատներ, չուկոցներ, ծակիչներ, մուրճ, կտրիչ, (зубиль): | Սպիտակ թիթեղ, յերկաթաթել 1,5 — մմ. տրամագծով. պղնձի գամեր (заклепки): |

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ յեվ նրանց նկարագրությունը | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| կոթեր չամչաների համար։ | խով և ծակիչով. դուրգամել (клепка) պղնձով։ | | Տեխնոլոգիական տեղեկութ. փափուկ, կոշտ, մետաղներ, մետաղաթել սանալը, բացատրելթիթեղի պատրաստելը։ |

## Թղթի յեվ ստվարաթղթի աշխատանքներ.

| | | | |
|---|---|---|---|
| Տետրեր, խորանարդ, պրիզմա (հատվածակողմ). հասարակ կազմ. (մի քանի մեքենայի կաղապար։ Զանազան բլոկ-նոտեր։ Շրջանակներ և այլ առարկաներ։ | Տետրեր և բլոկնոտեր կարել. արմատ և պիտակ (ярлык) կպցնելը. գրքեր նորոգել և սոսնձել։ Ստվարաթուղթը ստվարաթղթին կպցնել, ստվարաթղթերի ծայրերը կտրել թղթապանակներ կպցնելիս։ Բաց խորանարդի և պրիզմաների կանոտումն ու գծագրումը ըստ տված չափերի։ | Նույն գործիքները, ինչ վոր Բ. խմբակում։ | Զանազան թղթեր և ավելի հաստ ստվարաթուղթ, սոսինձ ներկ։ Թղթի և ստվարաթղթի պատրաստումը. այդ նյութերի վորակը։ |

## Կ ա ր.

| | | | |
|---|---|---|---|
| Վարագույրներ, սրբիչների մերեժկաներ, յերեխի շապիկներ, կոր և այլ ձևի գոգնոցներ։ | Խաչակար (ռուսական կար). կրկնակի կար. մերեժկաներ հասարակ ձև, վրակար։ | Նույնը, ինչ վոր Բ. խմբակում։ | Բաթան, այլ գործվածքների կտորներ, թելեր։ |



## Պոլիտեխնիկական աշխատանք IV խմբակում. փայտի աշխատանքներ.

| | | | |
|---|---|---|---|
| Մեխած կամ բութակներով (շիպերով) կպցրած զանազան չափի արկղներ (դռնակից, փաներից)։ Դարակներ տախտակից և փաներից։ Դասացուցակի շրջանակ։ Դեղանոց դռնակից։ Կախարան դարակով։ Ջրհորների և հանքավայրերի (шахты) վոլորաններ և ողերի կապի կաղապարը խիստ համաչափությամբ և լայն մասշտաբով։ Մինչին բարդության կամուրջների մոդելներ բավական մեծ չափերով և այլն։ | Դիկտի սղոցում, բութակի (շիպե) սղոցելն ու ամրացնելը։ 45 անկյունով սղոցել։ Ողերի միացումը փորոքների միջոցով (շիպերի)։ Ձողերի միացումը յերկարությամբ։ Արկղներին մեխ խփել շրեշակների միջոցով, խաչաձև միացնել շրեշակները կեսով չափ փորոք շինելով ամեն մեկի վրա։ Ժապավեն սղոցով սղոցելը ուղած ուղղությամբ։ Կլոր բութակ (շիպ) նեցուկների համար։ | Գոմփոր, դուր, փոքր կացին. նույն գործիքները, ինչ վոր յերրորդում, միայն այստեղ պետք է կանգ առնել գայլիկոնի, դազգյահի և մամլուկների կազմության վրա։ Ցույց տալ գայլիկոնի զարգացումը մինչև շաչափող դազգյաններն ու մեքենաները։ Ցույց տալ դազգյահի և մամլուկների սեղմելու հատկությունները և նրանց եյական մասերը։ | Կավարներ, զանազան տեսակի տախտակներ. դիկտ, սոսինձ, մեխեր։ Ծանոթացնել տեղական փայտի զըրխավոր տեսակների հետ՝ բաժանելով նրանց յերկու մասի՝ պինդ և փափուկ։ Շինարարական փայտեղենը արժանի յե հատուկ ուշադրության և պետք է նրա վրա ավելի մանրամասն կանգ առնել, ցույց տալով նրա դերը ինդուստրիայի մեջ։ Ցույց տալ տաշեղների, թեփի և փայտի փոշու օգտագործման միջոցները։ Փայտի ախտերը՝ ճաքճքումները, ծուռ շերտերը և չորացած ճյուղերը։ Աշխատանք ըստ լայնության և մազմզուկների ուղղությամբ։ Փթելուց պահպանելը՝ ներկ, կուպր, խանձումն։ |

## Թիթեղի յեվ մետաղաթելի աշխատանքներ.

| | | | |
|---|---|---|---|
| Կազմի համար քերիչներ, բանջարեղենի համար քերիչներ, հասարակ զավաթ։ | Կտրատել զանազան ձևեր և մետաղաթելերի ծռելը, գլան շինել մետաղաթելից, կապարով զոդել։ | Մկրատ, մուրճ, մեխ, շոկոց, նաշագը, զոդոց նկարագրել զոդոցը (паяльник) և բացատրել թե ինչու նա շինում են պղնձից (ջերմատարողություն)։ | Թիթեղ, հաստ մետաղաթել, կապար, զոդելու թթվուտ։ Կապարի վոչ օգտագործ հատկությունը ցույց տալ ամանեղենի կլայեկելու փաստով։ |

| Առարկաներ յեվ իրեր | Աշխատանքի գործառնություն | Գործիքներ յեվ նրանց նկարագրություն | Նյութ յեվ նրա տեխնոլոգիան |
|---|---|---|---|
| **Թղթի յեվ ստվարաթղթի աշխատանքներ.** | | | |
| Գրքի կազմեր. տետրերի թղթապանակներ, ծալվող և հասարակ զրամաններ, կլոր և ուղղանկյունի և այլն։ | Գրքեր կարել մույթով և առանց մույթի (тойка), կարել, կպցնել արմատ, կազմ, կալենկորի ան-կյուններ. թղթապանակներ ձևել զանակով, թղթեր փակցնել սոսնձով և անկյուններ պատրաստել, գլանի սոսնձելը հյուսնի սոսնձով։ | Ստվարաթղթի զանակ, մկրատ, վրձին, քրքրիչներ, թուղթ կտրելու զանակ կամ կորիչ։ | Մարմար թուղթ. հասարակ և մամլած (пресс) ստվարաթուղթ։ Պարուսին, կալենկոր գրանիտոլ։ |
| **Կար.** | | | |
| Աշխատանքի տոպրակներ. ասլիտակեղենի, սրբիչների և այլն, վրա զանազան մակագիր-ներ շինելը և այլն։ | Բոլորքը կանտեր ասեղնագոր-ծել. հանգույց (петля) կարել, ճյուղակար ասեղնագործել։ | Նույնը, ինչ վոր II խմբում։ | Կտավ և գործվածքների զանազան կտորներ. սև սպիտակ և գունավոր թելերի. կտավի տեխնոլոգիան, վուշ, նրա մշակումը և մեր արդյունաբերությունը։ |

# ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## I ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### Բացատրական մաս

*Աշխատանքային դպրոցներում ֆիզդաստիարակության նպատակն է նախապատրաստել դպրոցականներին աշխատանքի և ինքնապաշտպանության համար։*

*Արտադրության և գյուղատնտեսության ուժեղացումը, ինչպես և Կարմիր բանակի ռազմական աջողությունները բավական չափով կախումն ունի այն բանից, թե վորքան առողջ է խորհրդային ազգաբնակությունը։ Իսկ սրա պայմաններից մեկը պետք է համարել այն հանգամանքը, թե վորքան ֆիզդաստիարակության գործը համապատասխան բարձրության վրա յե կանգնած մեր դպրոցներում։*

*Ֆիզդաստիարակությունը մեր դպրոցների միասնական աշխատանքի անբաժան մասն է կազմում։ Իսկ սրա համար նպատակահարմար է, վոր առաջին աստիճանի դպրոցներում մանկան ֆիզդաստիարակությունը տարվի հենց խմբավար ուսուցչի միջոցով (բնական է, համապատասխան վերապատրաստումից հետո)։*

*Ֆիզդաստիարակության առանձին տարրերը պետք է ուժեղ կերպով հյուսվի չորսամյակի կոմպլեքսային ծրագրի հետ։*

*Առաջին աստիճանի դպրոցում ֆիզկուլտուրայի հետևյալ մասերը պետք է ոգտագործել.*

*1) ֆիզիքական վարժություններ, 2) սանիտարական - առողջապահական ունակություններ, բնության ֆակտորները (արև, ջուր, օդ) ոգտագործելու համար և 3) սանիտարական - առողջապահական դաստիարակություն։*

*Ֆիզ. վարժությունների տեսակները, ինչպես և սրանց կիրառման մեթոդները պետք է համապատասխանեն մանկան բիոլոգիական առանձնահատկությունների, սոցիալ - տնտեսական, բնության և կենցաղային պայմաններին։*

*Առաջին աստիճանի դպրոցում ֆիզդաստիարակության հիմունքը պետք է բնական շարժումները կազմեն (մանգալ, վազել, ցատկել, նետել, մագլցել և այլն)։*

Ֆիզդաստիարակության այն սիստեմը, վորը կիրառվում է մեր աշխատանքային դպրոցների առաջին աստիճանում հնարավորություն է տալիս հասնել հետևյալ նպատակներին.

1) Մատաղ մարմնի որգանների սիստեմի զարգացման։

2) Նյարդային սիստեմի ամրացման։

3) Ճարպիկության, ճկունության, հավասարակշռության զգացմունքի զարգացման։

4) Ընկերական, կոլլեկտիվ, դասակարգային սոլիդարության և հեղափոխական զգացմունքների սաղմավորման և զարգացման։

Վերհիշած ֆիզվարժությունների սիստեմի բովանդակությունն է.

ա. Մարմնամարզություն.

բ. Խաղեր.

գ. Սպորտային զբաղմունքներ.

դ. Եկսկուրսիա - զբոսանքներ։

Վոր մարմնամարզական մեթոդը անհրաժեշտ է առաջին աստիճանի դպրոցում, սա բղխում է այն հանգամանքից, վոր սպորտային զբաղմունքների և խաղերի ժամանակ յերեխաներն աշխատում են գործ դնել գլխավորապես հաղթահարելի կողմերը և անուշադիր են թողնում այնպիսի ունակությունների յուրացումը, վորոնք դժվար են թվում, կամ չի աջողվում նրանց։ Մինչ մարմնամարզական մեթոդն այն մեթոդներից է, վորը ազդում է որգանիզմի առանձին մասերի վրա, տալիս է առանձին շարժումների ունակություններ և հնարավորություն է տալիս մարմնի ձևի ուղիղ զարգացման և հոդերի աշխատանքներին։

Խաղերը ֆիզդաստիարակության այն միջոցներից են, վորոնք կապ ունեն բնական շարժումների մի շարք կոմպլեքսների հետ։

Խաղերին, ֆիզիք. վարժությունների այլ վարժությունների հետ համեմատ, խոշորագույն տեղ պետք է տալ առաջին աստիճանի դպրոցներում։

Սպորտային զբաղմունքները ֆիզդաստիարակության այն միջոցներից են, վորոնք կապ ունեն ֆիզ. վարժությունների այս կամ այն տեսակների ազատ ընտրության հետ։ Այս վարժությունների նպատակն է տալ յերեխային համարձակություն, տոկունություն, ճարպիկություն, ույժերի կուտակում։

Եկսկուրսիային աշխատանքային դպրոցների առաջին աստիճանում հատուկ ուշադրություն է դարձվում։

Բացի հատուկ, ֆիզկուլտուրային վերաբերյալ եկսկուրսիաներից, պետք է դպրոցական բոլոր տեսակ եկսկուրսիաների մեջ կիրառել նաև ֆիզկուլտուրայի ֆակտորները։

Առաջին աստիճանի դպրոցներում, բացի ֆիզ. վարժություններից պետք է ոգտագործել նաև այնպիսի ֆակտորները, ինչպիսիքն են՝

1) Առողջության ֆակտորները (արև, ջուր, ոդ).

2) Որգանիզմի ամրապնդումն.

3) Առողջապահության ունակությունների յուրացում (որվա ռեժիմ,



կերակրի, անձնական հասարակական, ֆիզիքական վարժությունների առողջապահություն)։

Վորովհետև աշխատանքի պրոցեսը միակողմանի ազդեցություն ունի մկանների աննշան մասի վրա (մանավանդ I աստիճանի հասակի յերեխաների), սրա համար շատ զգուշությամբ պետք է կիրառել այն, ձևափոխիչ ազդեցությունից (деформация) խուսափելու համար։ Ուսուցչի դերը այստեղ կայանում է նրանում, վորպեսզի լավ ծանոթանա աշխատանքի պրոցեսների հետ և ուղղիչ վարժությունների միջոցով կռվի դեֆորմացիայի դեմ։

## I ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

### I. Շարքային վարժություններ

ա. Շարք.

Մեկ շարքով, կարգով, շրջան։

Պատրաստ (հիմնական), ազատ։

բ. Ձևային (фигурная) քայլվածք:

Շարժում ուղիղ գծով.

Շարքի բաժանում ու միացում.

Աջ և ձախ կողմ շարժում շրջանի մեջ (յերգով)։

### II. Նախապատրաստական վարժություններ.

ա. Ազատ շարժում.

Ձեռքերի (թևեր) շարժում աջ, ձախ, առաջ հետ։

Ձեռքերի շրջանաձև շարժում։

Ձեռքերով նմանողական շարժումներ։

Կացնով փայտ կոտրելու իմիտացիա (մարմնի շարժում — թեքում, կռանալ)։

Վոտի ծայրերի վրա բարձրանալ, ցածրանալ։

Նիստ, կիսանիստ։

Նմանողական զանազան շարժումներ։

### III. Հավասարակշռություն.

1. Գետնի վրա:

Կանգնել մեկ վոտի վրա, վոտի ծայրերի վրա։

Բարդացնել վերհիշած ձևերը ձեռքերի (թևերի) շարժումներով։

2. Գերանի վրա (30 սանտիմետր բարձրությամբ)

Բարձրանալ, իջնել

Կանգնել յերկու, մեկ վոտի վրա

Այս ձևերի բարդացումը ձեռքերի շարժումներով։

Գերանի վրա մանգալ (տափակ կողմի վրա)։

### IV. Նետում.

Դեպի վեր նետել գնդակ և յերկու ձեռքով բռնել։

Գնդակ բռնելու գործողությունը բարդացնել ծափ տալով։

Գնդակ պատին խփել և բռնել.
Գնդակ հատակին խփել և բռնել.
Գնդակ շատ անգամ վեր նետել ձեռքի ափով (ладонь)
Գնդակ միմիանց նետել.
Մեծ գնդակ գլորել բաց ոտների միջև:
Միջին մեծության գնդակ վեր նետել և բռնել:
Շրջան կազմել և միջին մեծության գնդակ միմիանց նետել:

### V. Ցատկում յեվ թռիչք.

ա. Թռչկոտել տեղում.
Յերկու ոտի վրա,
Մեկ ոտի վրա
Պտույտ գործելով դեպի աջ, ձախ:
բ. Տեղից ցատկել, թռչկոտել
Յերկու ոտի վրա, մեկ ոտի վրա, դեպի առաջ, յետ, աջ, ձախ:

### VI. Վազել.

Սովորական վազք (առանց չափի)
Վազել ոտի ծայրերի վրա:
Վազելու առանձին տեսակները գործածել խաղի ժամանակ:

### VII. Խոչընդոտներ (դիմադրություն)

Նախապատրաստական վարժություններ դիմադրության համար:
Մարմնի (իրան) դանդաղ թեքում դեպի առաջ, հետ:
Նույնը ձեռքեր բարձրացրած — մարմին պտտելով.
Մարմնի դանդաղ թեքում աջ ու ձախ — ոտները բաց կեցվածքով:
Ուժային վարժություններն այս խմբակի համար անթույլատրելի յեն:

### VIII. Խաղեր.

Ա. Խաղեր վազվզելով
1) Ֆաշիստներ.
2) Պատրաստ.
3) Վորսի հետևից վազել.
4) Պիոներներ և խնամազուրկ յերեխաներ:
5) Գնացք.
6) Կոմմունա.
7) Ծույլ հովիվ.
8) Հոկտեմբերիկներ:
Բ. Խաղեր վազվզելով
ա. Կաղ վոստիկան (չոլախ պրիստավը)
բ. Գայլը վորջի մեջ
գ. Նապաստակները բանջարանոցում:
Գ. Խաղեր գնդակով
1. Գնդակը պատին



2. Գնդակը փոսի մեջ,
3. Գնդակը շրջանի մեջ,
4. Գնդակով դաղում:
Դ. Նմանեցնող (ընդօրինակող) խաղեր
1. Աշխատանք,
2. Բանվորներ,
3. Մանկական սանիտարական հանձնաժողով.
4. Ճանապարհորդներ
5. Գնացք:

### IX. Հանգստացնող վարժություններ.

Մանգալ ձեռքերը շարժելով, մանգալ յերգով:

---

## II ԽՄԲԱԿ

### I. Շարքային վարժություններ.

ա. Շարք

Նույնը, ինչ վոր I խմբակում, բայց պետք է ավելացնել.

Շրջանի և շարքի փակումը (բացումը), միացումը (փակումը) ոտներով, ցատկումներով:

Դարձ (շրջել դեպի աջ, դեպի ձախ:

Հաշիվ կարգով (1—2, 1—3, 1—4)

Շարքի կառուցում, ազատ շարժումների համար:

բ. Ձեվային վարժություններ:

### XI. Նախապատրաստական վարժություններ.

Ա. Ազատ շարժումներ

Բաց (ձիգ) ձեռքերով (թևերով) շարժումներ, թևերի շարժումներ ծալելով և բանալով:

Մարմնի (իրան) շարժումներ, թեքել, դարձնել:

Ձիգ (ուղիղ) կանգնել

Կռանալ (թեք կեցվածք),

Խառը շարժումներ — ձեռքերի ու ոտների շարժումների կամ կռանալու հետ կոմբինացիաներ (2—3 հաշվով)

Բ. Վարժություններ դրոշակներով:

### III. Հավասարակշռություն.

Նույնը, ինչվոր առաջին խմբակում: Պետք է ավելացնել.

ա. Գետնի վրա: Կանգնել մեկ ոտի վրա, մյուսը շարժելով:

Բ. Գերանի վրա: Մի ոտի վրա կանգնել լայնությամբ և յերկարությամբ (գերանի):

Մանգալ գերանի լայնությամբ և յերկարությամբ (30 սանտիմետր բարձրության)։

Բումի վրա մանգալ։

### IV. Նետում.

Նույնը, ինչ վոր առաջին խմբակում, միայն պետք է ավելացնել.

Առաջին խմբակի վարժությունները, բայց այստեղ գնդակը պետք է բռնել մեկ ձեռքով։

Գնդակ նետելու կանոններ պետք է սովորեցնել։

Նետել գնդակ գլխի վրայով (դեպի յետ)։

### V. Մագլցել.

Գործիքներ. ուղղահայաց և թեք սանդուղք, բում, ձող։ Նախապատրաստական վարժություններ մագլցելու համար ձողի վրա, ձեռքերի և վոտների ոգնությամբ։

Մագլցել թեք սանդուղքի վրա, ձեռքերի և վոտների ոգնությամբ։

Մագլցել զանազան արգելքների (խոչընդոտների) վրայով (1 մետր բարձրությամբ) ձեռքերի և վոտների ոգնությամբ,

### VI. Ցատկում.

Նույնը, ինչ վոր I խմբակում, ավելացնել պետք է.

Յերկար վոստաթել (скакоалки)—վազել վոստաթելի տակով։

Կարճ վոստաթել — թռչկոտել տեղում, դանդաղ, արագ, թռչել 50 սանտիմետր խորություն ունեցող փոսի մեջ։

Վազելով թռչել 30—50 սանտիմետր բարձրությամբ։

### VII Վազել.

Նույնն է ինչ վոր I խմբակում, պետք է ավելացնել.

Տեղում վազել.

Վազել բարձր թռիչքներով.

Վազել յերկար թռիչքներով.

Վազելու և մանգալու կոմբինացիա։

### VIII. Խոչընդոտներ.

Նույնն, ինչ վոր I խմբակում, ավելացնել պետք է,

Կեցվածք բաց քայլերով, մարմնի դանդաղ թեքում դեպի աջ և ձախ, ձեռքերը դեպի վար պահելով։

Ամբողջ մարմնով դեպի առաջ նետվել, ձեռքերը բարձր, կամ բաց պահելով։

### IX. Խաղեր.

Նույնն ինչ վոր I խմբակում։

### X. Հանգստացնող վարժություններ.



## III ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

### I. Շարքային վարժություններ.

Ա. Շարք

Նույնն ինչ վոր յերկրորդ խմբակում, բայց պետք է ավելացնել.

Դարձ (շրջել) դեպի յետ։

Տեղում քայլել։ Տեղում քայլերից առաջ շարժվելուն անցնել և ընդհակառակը։

Մանգալուց վազելուն անցնել և ընդհակառակը։

Շարքից յերկշարք կազմել և ընդհակառակը։

Կարգը յերկու կարգի վերածել և ընդհակառակը։

Բ. Ձևային վարժություններ.

Նույնն, ինչ վոր II խմբակում։ Ավելացնել.

Քայլել յերկու շարքով ուղիղ և թեք ուղղությամբ։

Շարքը նոսրացնել և խտացնել, կազմել չորս կարգ։

### II. Նախապատրաստական վարժություններ.

Ա. Ազատ շարժումներ.

Նույնն, ինչ վոր յերկրորդ խմբակում, այստեղ պետք է ավելացնել.

Ձեռքերի (թևերի) շարժումներ ուղիղ գծով կծկելով (հավաքելով) և ուղղելով (բանալով)

Մարմինը (իրան) պտտել (դարձնել)

Ուղիղ կեցվածքներ, քայլ մեծ, քայլ փոքր։

3—4—6 տարրերի կոմբինացիա։

Ուղղիչ վարժություններ

Բ. Վարժություններ փայտով

Փայտ հորիզոնական և ուղղաձիգ դիրքերով։

Այս դիրքերի փոփոխությունները։

### III. Հավասարակշռություն.

Նույնը, ինչ վոր II խմբակում, պետք է ավելացնել.

Քայլել թեք տախտակի կամ նստարանի վրա։

Քայլել գերանի վրա ձեռքերի շարժումով։

Նույնը դեպի յետ և կողքով։

Քայլել, քայլերի տարբեր ձևերով, բարդացնել։

### IV. Նետում.

Նույնն, ինչ վոր II խմբակում, ավելացնել պետք է.

Նշան խփել (5—6 մետր տարածությամբ) փոքրիկ գնդակով։

Միջակ չափի գնդակի նետում տարածության մեջ։

Գնդակ նետել ուղղահայաց նշանով։

Նետ ու աղեղ նետել։

### V. Նախ ընկնել.

Գործիքներ. *սանդուխք, բում, գերան (բարձր)*

*Կախընկնել կանգնած, կկզած և ձեռքերը յետ, պառկած, կողքին (աջ, ձախ)։*

*Այս ձևերը բարդացրել ոտների շարժումներով։*

*Բարդ ձևերի փոփոխությունը դառնալով։*

### VI. Նեցուկ (*դիմադրություն*).

*Շվեդական աթոռի կամ ցածր հորիզոնական գերանի վրա։*

*Բարդ, կանգնած, կկզած, պառկած, ձեռքերը յետ։*

*Նույնը մեկ ոտի շարժումներով բարդացնել։*

### VII. Վազել.

*Նույնը, ինչ որ* II *խմբակում, ավելացնել պետք է.*

*Վազել շրջելով և պարզ խոչընդոտներով։*

*Վազել դիմացկանություն ցույց տալու համար, բայց 2 րոպեյից ոչ ավել։*

### VIII. Ցատկում.

*Նույնը, ինչ որ յերկրորդ խմբակում, պետք է ավելացնել.*

*Ցատկոտել միևնույն տեղում և տեղից (առաջ) շրջան գործելով (բարդ).*

*Նույնը (ցատկոտելով առաջ գնալ), ոտների և ձեռքերի շարժումներով։*

*Նույնը տարբեր արագությամբ։*

*Վոստաթելով վարժություններ։ Ցատկոտել տեղում,*

*Առաջ շարժվելով, շրջելով (դառնալով),*

*Ձեռքերի և ոտների շարժումներով։*

*Ցատկել տարածության մեջ, տեղից (75 սանտիմետր), վազելով (100 սանտիմետր)*

*Ցատկել տեղից 30 սանտիմետր բարձրությամբ, վազելով 50 սանտ.*

*Վարժություններ յերկար և կարճ վոստաթելով։*

### IX. Խոչընդոտներ.

Ա. Ձգել (ձիգ տալ) մեկ ձեռքով (*գերակշռելու նպատակով*)

*Հակառակորդին (ձեռք-ձեռքի տված) դեպի շրջան քաշել,*

*(Պայքար շրջանի համար, պայքար շրջանի սահմաններում, պայքար շրջանի մեջ)։ Հակառակորդները աջ ձեռքով են իրար ձգում, քաշում)։*

Բ. Յերկու ձեռյով:

*Ճակատ առ ճակատ (իրար են քաշում, ձիգ տալիս)*

*Նույնը փայտի ոգնությամբ։*

### X. Խաղեր.

*Նույնն, ինչ որ յերկրորդ խմբակում, պետք է ավելացնել.*



*Կեսգիշեր, (գիշեր-ցերեկ), բեռնավազք* (эстафетки).

*«Յերկրորդն ավելորդ է», սպիտակներ և կարմիրներ, արջ, ցանց, Մոպր,*

Խաղեր թռչկոտալով, *հնձող, ֆաշիստների արշավը.*

Խաղեր գնդակով, *բերդ, գնդակը ոդում, գնդակը շրջանում, գնդակը փոսի մեջ, Թափառաշրջիկ գնդակ։*

### XI. Հանգստի վարժություններ.

*Նույնն, ինչ որ յերկրորդ խմբակում։*

---

## ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

### I. Շարքային վարժություններ.

Ա. Շարք.

*Նույնը, ինչվոր* III *խմբակում, ավելացնել.*

*Յերեք շարք և յերեք կարգ կազմել և ընդհակառակը.*

*Դառնալ դեպի հետ, տեղում և տեղից շարժվելու ժամանակ.*

*Չորս կարգ կազմել.*

Բ. Ձևային վարժություններ.

*Նույնն, ինչ որ* III *խմբակում, պետք է ավելացնել ավելի բարդ ձևի շարքեր ու կարգեր։*

### II. Նախապատրաստական վարժություններ.

Ա. Ազատ շարժումներ.

*Ձեռքերի (թևեր( մարմնի (իրան) ոտների և գլխի շարժումներ.*

*Կոմբինացիաներ (2—4հաշվով) թևերի և ձեռքերի շարժումների, ինչպես և իրանի շարժումների հետ։*

Բ. Վարժություններ փայտերով

*Նույնն, ինչ որ* III *խմբակում.*

Գ. Ուղղիչ վարժություններ.

### III. Հավասարակշռություն.

*Նույնն, ինչ որ* III *խմբակում. ավելացնել.*

*Թեք գերանի վրա մանգալ*

*Մեկ ոտի վրա կանգնած կատարել ձեռքերի, ոտների և մարմնի տարբեր շարժումներ։*

### IV. Նետ (Նետում).

*Նույնն, ինչ որ* III *խմբակում*

V. Կ ա խ (*կախ ընկնել*).

*Նույնը, ինչ վոր III խմբակում, ավելացնել.*
*Տարբեր ձևի կախումներ (կախ ընկնել), կախ ընկնել ծնկներով։*
*Բարդ ձևերի բարդացումն ձեռքերի վրա ման գալով։*
*Մագլցել պարզ ձևերով։*

VI. Հ ե ն ո ւ մ ն (*նեցուկ*).

*Նույնն, ինչ վոր III խմբակում, պետք ե ավելացնել.*
*Պառկած նեցուկի բարդացում, վոտների շարժումներով։*
*Տարբեր նեցուկների փոփոխությւններ։*

VII. Վ ա զ ք (*վազել*).

*Նույնն, ինչ վոր III խմբակում։*

VIII. Ց ա տ ք (*ցատկում*)

*Նույնն, ինչ վոր III խմբակում։*

IX. Ա ր գ ե լ ք (*խոչընդոտներ*).

*Նույնն, ինչ վոր III խմբակում, պետք ե ավելացնել.*
*Ձիգ (ձիգ տալ, ձգում) յերկու ձեռքով, նույնը փայտի ոգնությամբ.*
*Միմիանց ձգել (ձիգ տալ) տարբեր ձևերով, իրար ձեռքերը բռնելով։*

X. Խ ա ղ ե ր.

*Նույնն, ինչ վոի III խմբակում։*

X. Հանգստի վարժություններ.

*Նույնն, ինչ վոր III խմբակում։*

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ ССР
Ա. им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

476

Арп.
1-694ა

1-ლი საფეხურის სკოლების პროგრამები

**სახელმწიფო გამომცემლობა**

სახელგამის პირველი სტამბა, პლეხანოვის პროსპ. № 91.

შეკვ. № 1126 მთავარლ. № 2781. ტირ. 1000.

ՀՀ Ազգային գրադարան
NL0231897

51. 968
Арм
4-694 а.